Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Latin
586

1 9 99

4542

# ԳԱՐԱԳՈՅ

# ԺԱՄՔ

ՄՈՎՍԻՍԻ ՋՕՀՐԱԳԵԱՆՑ
ԱՐՑԱԽԵՑԻՈՅ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ի ՄՈՍԿՈՒԱ

1859

4549

# ՊԱՐԱՊՈՅ

# ԺԱՄՔ

1882

# ԳԵՐԱԳՈՅ
# ՃԱՌՔ

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկեր.
– 5 ІЮНЬ 1898
Центр. Библiот.-Чит.
Арм. Благ. Общ.

## ՄՈՎՍԻՍԻ ԶՕՀՐԱՊԵԱՆՑ ԱՐՑԱԽԵՑԻՈՅ·

Ընծայեալ յերջուոյ տառանոյ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ·

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի տպարանի Վօլդէմարայ Գօթիէ։

1859.

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ,**

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 20-го Сентября, 1858 года.

Ценсоръ *И. Кайтмазовъ.*

45 86-60

29 598

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկեր.
– 5 ИЮНЬ 1898
Центр. Библiот.-Чит.
Арм. Благ. Общ.

## ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ···
## ՓԱՌՔ ՅԱՒԻՏԵԱՆՍ ա.։

Հա՛յր մեր բարեխնամ, որ յերկինս բազմիս,
Յեւից համայնից միշտ փառաբանիս,
Եւ որ բոլորից տաս, կամիս բարիս,
Յառատ աջերէդ բաշխես շկարիս։

Սո՛ւրբ է, եղիցի՛ յաւերժ քո անուն,
Օրհնեա՛լ ես Տէր մեր, պահապա՛ն անքուն.
՚Ի քեզ հայրն աչք գոյական համքուն,
Մե՛ծ է զօրութիւնդ, գթութիւնդ անհուն։

Ընծայէ՛ առ մեզ քո արքայութիւն,
՚Ի սիրտ մեր սուրբ քո Հոգի շնորհատուն,
Ուսուցէ գիտել զքո Տէրութիւն,
Զառատ սէր, զգութ Հօրդ գերաբուն։

Ամենեցո՛ւն հայր որ յերկինս և յերկիր,
Զի Աստուած միայն, Տէր ես ամենի·
Դու և լոյս, կեանք, յոյս համայն աշխարհի,
Քու եղև ամէն, Քու և պահպանի :

Զհանապազորդութեան և զանձախմն ուշոց,
Յորմէ խանդացեալ չարն զմեզ զրկեաց·
Տո՛ւր մեզ ճաշակել 'ի քոց սուրբ կամաց,
Քրտամբք երեսաց, բղխմամբ արտասուաց :

Թո՛ղ մեզ զպարտիս՝ ո՛ սուրբ Տէր, Աստուած,
Բարերա՛ր, գթած, քաւիչ յանցանաց·
Տո՛ւր և զօրութիւն տկար մեր մտաց,
Զշնորհս սուրբ Հոգւոյդ, կալ ընդդէմ մեղաց :

Ուսո՛ և զմեզ լինել ողորմած,
Զի և մեք թողցուք մեր պարտապանաց·
Հետևմամբ այս սուրբ կամացդ, օրհնաց
Արժանի լիցուք անվախճան կենաց :

Մի՛ տանիր զմեզ Տէր 'ի փորձութիւն,
Զի տկա՛ր է մեր դիւրադայթ բնութիւն·
Դու ամենագէտ ակն ես յարարէթուն,
Յայտնի են քեզ մեր միտք, գաղտնիք համբուն :

Նաւ ծովեա՛ մեզ 'ի յարուող ալեաց ,
Տո՛ւր մեզ հաստատուն հաւատոյ զզէն
'Ի մարտ Թշնամւոյն , որ յաւէտ անդէն
Ճգնի առնել զմեզ զուրկ 'ի մեր բաժնէն ։

Օ՜ Երրորդութեան փառք է , և 'ի քէն
Ծագի գթութեան , Դու և տնօրէն
Մեր խաղաղ կենաց , մեր յոյս , ապաւէն ,
Քեզ փառք այժմ և միշտ յաւիտեանս , ամէն ։

---

## ԵՐԳ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ·

Ո՜վ արդեօք հաստչի դէ պատկեր մեկին դարուց շրջանակ,
Նորին Աստուած՝ երգէ կարդայ զքեզ ամ լեռն քև միակ։
'Ի գարնան քոյդ սէր զզարդ հրաշագեղ, նորոգումն կրկին
Նշէ յանդս 'ի դաշտս, ծաղկի պճրքն երկիր, շողայ լուրջ
երկին ·
Սարք, բլուրք, հովիտք պճնազգեաց լինին վայելուչ դեղով,
Նոյն սիրոյդ խաղաղ ջերմութեան բանայ զմեր սիրտ մեղմով։
Դու 'ի յամառան շրջապատ փակես շանթիւք խիստ տապոց,
Տաս փայլուն գունով, բերես մեզ 'ի շահ հասուն պտղոց։
Տաս ձայն բազմահունչ յամպոց բարձրախաղ որոտմամբք
բոմբիւն ,

Ընդ այգն արշալոյս, 'ի ջեռն զայրացեալ, յանդորրն երեկուն,
Բաղցրաւէտ շնչմամբ ծառոց մացառաց, առուօք կարկաչուն
Ո՜չ արդեօք սլացեալ բերի առ մեզ ձայն սիրոյդ պատարուն:
Դու յաշնան կազմես համասփիւռ խնջոյս քոց ձեռակերտաց,
Իսկ 'ի ձմեռան յամպս մրրկալից ահեղ ես Աստուած:
Ի խրոխտ ահարկու յարհաւիրս զգենուս զաւերման արկած,
Ծուխս կորուսիչ ընդ ցնդեալ փոշի դիւրից, ծործորաց,
Նա՝ յածեալ ժխոր զամպրոպաց մրրիկս յոխորտ փոթորկաց,
Բանի ահընկեց, սոսկալի թուին բնութեն ցոյցք դիմաց:
Եւ աշխարհ շքթեալ հիացմամբ ընդ գործ ձեռացդ զօրութեան
Կարդայ զԱրարիչդ, օրհնէ գովաբան ահիւ դողութեան:
Ահ, Դու ես աղբիւր մեր ամէն բարեաց, Դու Ա՛ծ միայն,
Դու մեր պահպանիչ, Դու յոյս ապաւէն, կեանք միանգամայն:
Սուրբ ես Դու հզօր, անհաս մեր մտաց, քո գործք անթերի,
Մեծ ես Դու յերկինս, փառաւոր անուամբ, բարեօքդ 'ի յերկրի:
Աշխարհ բովանդակ քո են արարածք, Դու խաղաղարար,
Օ ցայգ և ցերեկ անշէջ կաս լուսով անփոխ, հաւասար:

'Ի քէն մեզ բաշխին տուրք ողորմութեան, քև եմք մեք
կենդան ,
Աչօքդ յարարթուն 'ի բարձուստ յերկնից պահիմք ան-
սասան :
Տո՛ւր Տէր իմ Ա՟ծ գիտութեան զլոյս աչաց իմ մըտաց,
Տեսանել, օրհնել զվեհ զօրութիւնդ միշտ և անմոռաց:
Ուսո՛ կատարել ինձ զսուրբ օրէնս, հաճոյս քո կամաց ·
Եւ խաղաղացո՛ զիմ անագորոյն զալիս կրից չարեաց,
Յոր անմտաբար սուզայ ես հոգւով, յոր և միշտ մեղայ
Իբր անծան փառացդ տգետ, զաչացու, անբան անզգայ:
Մե՛ծ են իմ յանցանք արժանի պատժոց, անթիւ ահաւոր,
Բայց մեծ և անբաւ են քոյդ գութ, խնամք, հա՛յր մեր
երկնաւոր :
Դու Ա՟ծ բարի, Դու բնաւ ո՛չ յիշես զչարիս մարդկան,
Առատ պարգևաց քոց յաւիտենից չի՛ք վերջ և սահման:
Փառք քեզ , Տէ՛ր , բիւր փառք , բաշխող մեր կենաց
բարեաց տընօրէն ,
Փառք քեզ և՛ օրհնութիւն այժմ և միշտ յապայն յաւի-
տեանս , ամէն :

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Յորժամ յամառան 'ի դաշտի զբօսնում,
Որչափ տեսանեմ զտընանկս բազում :
Ի՞նչ Քեզ հատուցից Տէ՛ր պարգևատու ,
Ս՝ան ամէն բարեաց, զոր ետուր ինձ Դու :

Չեմ ես առաւել քան զայլըս արժան ,
Բայց Քո գութ է , Տէր , անվերջ , անսահման :
Յագեալ եմ ես միշտ, բայց գոն, որոց պարկ
Յօրական հացէ զուրկ է և դատարկ :

Տեսանեմ յաճախ ես զայլ երախայս ,
Անտերունչ և որբս, մերկ 'ի պողոտայս :
Իսկ ես զօգնութիւն, ըզհոգ , ըզհագուստ
Ունիմ հանապազ յիմոցս ամենուստ :

Ո՛չ ոմն վատաբաղդ ո՛չ ևս գիտէ ,
Թէ յո՛ր քար դնել զիւր գըլուխ կարէ .
Ո՛չ գոյ ինձ պատրաստ հօր իմոյ 'ի տան
Մահիճ, յոր ննջեմ ես 'ի հանգստեան :

Ո՛չ ոմն մանուկ՝ թարց ինչ տեսչութեան ,
Անկանի 'ի մեղս ըստ տգիտութեան .
Բայց իմ ծնողք ջանան ինձ ուսուցանել
Զանուն Աստուծոյ միշտ յիշել կրկնել :

Ահա զոր բաշխէ յամէն օր կենաց ,
Ինձ Տէր Արարիչ , գթածն իմ Աստուած :
Թո՛ղ փառըս տացեն վասն այս պարգևաց ,
Նմա իմ սրտիւ աղօթք մաղթանաց .

# ԱՂՕԹՔ։

Վառեա՛ց, տու՛ր պայծառ զլոյս, իմ լապտե՛ր·
Կա՛ց յաղօթս ջերմով, իմ հոգի՛, առ Տէր։
Ծառայ եմ կըրից, դըժոխոց պատկան,
Եւ յաւիտենից տանջանաց արժան։

Հայիմ յանցեալ կեանս ահիւ սոսկալի,
Զո՛ւր խնդրեմ գործ ինչ 'ի նոսին բարի·
Եւ երբ յանցաւոր 'ի բանդի կամ ես,
Նեղիմ, չարչարիմ, սարսիմ սաստկապէս։

Բայց գթած ես Տէ՛ր ամենաբարի,
Փութամ անկանիլ ես քո առաջի,
Առ քեզ՝ ո՛ Փրկիչ՝ աղօթիւք մատչիմ,
Լո՛ւր, ուղղեա՛, փրկեա՛ թշուառ զոգին իմ։

Կամիմ աղօթել ես ջերմ եռանդիւ,
Կամիմ ողբալ ես զիմ յանցանս անթիւ·
Բայց մինչ հակի սիրտս 'ի սէր աշխարհի,
Արտօսր յիմ 'ի յաչս 'ի սպառ ցամաքի։

Պաղեալ, զովացեալ է հոգիս համայն,
Ոչ անսայ բընաւ սուրբ Ճշմարտութեան.
Պակասեալ է յիս հաւատ կենդանի,
Ծածկեալ է 'ի նմին հանգիստ ցանկալի։

Տեսանեմ զՔոյդ շյարկ պանծալի,
Նորոգեալ զտուն Քո սուրբ հրաշալի.
Ո՜չ աւա՜ղ, զի չէ՛ք իմ յոյս Թանկագին,
Ու ես կամ, մընամ 'ի նախագաւթին։

Ահ, զիմ դիւրացո՛ զաղէտս տանջանաց,
Զիմ աղտեղութիւն մաքրեա՛ գարշ մեղաց։
Տո՛ւր ինձ զարտասուս ապաշխարութեան,
Զի դեղ են նոքին հոգւոյս խօթութեան։

## ՏՆԱՆԿ։

Ուր դնել մարթիմ զիմ զգլուխ արդեօք,
Գո՞յ հանգոյն ինձ որբ, Թշուառ, տնանկ ոք։
Ահ, ո՛չ. ես միայն դժբաղդ գըլխովին,
Զոհ եղէ 'ի ծնէ անգութ օրհասին։

Զո՛ւրկ յամէն բարեաց, յընչից կենցաղոյս ,
Որք եմ խղճալի, անտերունչ , անյոյս ։
Ինձ չէ՛ք ոք պաշտպան, ո՛չ և ընտանիք ,
Տուան 'ի բաժին ինձ միայն չարիք ։

Կամէի հայել խրախ անգամ մի եթ
Յաշխարհ , զոր Աստուած ստեղծ և մեզ ետ ։
Վայելել 'ի փառս անուան իւր սրբոյ ․
Այլ աւա՜ղ, խիստ է դառն վիճակ որբոյ ։

Ո՛չ ճաշակեցի զպտուղս բաղդի ,
Չ՛է ծանօթ այն ինձ 'ի ծընէ անտի ։
Ցաւ , վիշտ և փորձանք են իմ ուղեկից ,
Ինձ միայն բուսան տատասկք փշալից ։

Ո՛հ , մեղայ, զի՞ իմ ողբ , տրտունջ վհատ ,
Մեծ է իմ Աստուած, գութ նորա առատ ։
Նա իւր սուրբ կամօք ո՛րչափ , ո՛ւմ արժան ,
Շնորհեաց ամենից զպարգևս բարութեան ։

Թո՛ղ ուրեմն վաստակ , դառնութիւն կենաց ,
Թո՛ղ ծանր աշխատանք , քրտունք երեսաց
Մինչ ցկէտ վերջին իցեն իմ բաժին ,
Զիս կարօտ թողցեն աւուր պարենին ։

Ես ո՛չ նախանձիմ ընդ այլոց բարիս ,
Ընդ ճոխ կեցութիւն , բազմածախ ընթրիս ։
Ոչինչ ապարանք , շինուածք հոյակապ
Չեն ինձ թուելի , ո՛չ և գանձք անչափ ։

Յարգանք , փառազարդ տիտղոսք մեծանուն ,
Արուեստք գովելիք , գիտութիւնք համբուն ,
Ճոռոմ պերճաբանք , հանճար գերապանծ ,
Ո՛չ զօրեն շարժել յիմ սիրտ զնախանձ ։

Թո՛ղ վայելեսցէ անձնիւր յիւր վիճակ ,
Տուեալն 'ի բարձանց 'ի գիւտ 'ի վաստակ ։
Մ՝ի մա՛հ ամենից է վերջին սահման ,
Մ՝ի իսկ վերջավա՛ն , մի հո՛ղ գերեզման ։

Աշխարհի բարիք մնասցեն յաշխարհի ,
Զ՝որ եգիտ աստ ոք՝ թողցէ ընկերի
Յետ մահուն , միայն 'ի բաժին յետին
Տացի նմա փերթ կտաւոյ չնչին ։

Ուստի անդժգո՛հ , անխռով հանդարտիկ ,
Զ՝իմ ո՛չ անգոսնեմ խրճիթ զաղքատիկ ։
Ո՛չ նեղիմ 'ի նմա , յոր և իմ հանգիստ ,
Ո՛չ ևս տրտնջեմ զօրհասէն իմ խիստ ։

Զիմ հանապազորդ չոր հաց և ջուր լոկ
Վայելեմ յանդորր, կենօք ես անհոգ ·
Իսկ վասն այս բարեաց զիմ գթածն Աստուած
Օրհնեմ, գոհանամ յաղօթս գետնամած ։

Ո՛վ առատ Աստուած, բարութեանց աղբիւր,
Քանի՞ բաշխես Դու զպարգևս մեզ բիւր ։
Թռչունք և սողունք, անբանք, կենդանիք
Վայելեն 'ի քէն զամենայն բարիք ։

Դո՛ւ մեր խնամարկող, Տէ՛ր և կառավար,
Դո՛ւ ստեղծեր, պահես բովանդակ զաշխարհ ։
Դո՛ւ պատճառ, լոյս, կեանք ստեղծուածոց համայն,
Քե՛զ է պարտաւոր մեր շունչ ամենայն ։

Դու ո՛չ մոռանաս եղկս զթշուառս,
Պահի՛ն Քո վասն իմ յանսպառ համբարս
Կարևոր պիտոյք յապրուստ իմ մարմնոյ,
Դու տանիս միշտ հոգ և զիմ զհոգւոյ ։

Զ'Քեզ ունիմ Հայր, պաշտպան, Տէր որբոյս,
Դո՛ւ ես մի միայն ապաւէն իմ լոյս ։
Յիշելով զ'Քեզ մխիթարիմ միշտ,
Քև թեթևանայ դառնագին իմ վիշտ ։

Գթութեանդ աղբիւր բաց է անխընայ,
Ծագես Քո զլոյս յամենից վերայ ։
Քեւ կեան, մնանին բարիք այլ և չարք,
Մի է տեսչութեանդ անհաս սահման, կարգ ։

Փառք, գոհութիւն Քեզ Ամենակալիդ
Վասն անհատ շնորհաց հզօր Արարչիդ,
Զոր Դու միշտ բաշխես Քոց արարածոց,
Մեծաց և փոքունց, տնանկաց, որբոց ։

Աղքատք, մեծատունք մի են առ Քեզ, Տէ՛ր,
Հայես միակերպ 'ի մեզ անտարբեր ·
Դատես զարարածս ըստ գործոյ արդար,
Սուրբ է միշտ Քո կամք, Աստուած բարերար ։

Ըստ անսուտ Բանիդ Քո՝ յարքայութեան
Օթեւանք բազում են պատրաստական ·
Տո՛ւր և ինձ տեղի անդ ըստ քում կամաց,
Հասանել երկնից անվրդով կենաց ։

## ՏԱՐԵԳԼՈՒԽ։

Երեց տասանց ամաց շրջան
Եհաս այսօր 'ի կէտ լրման։
Աւաղ, անցին կեանք իմ ունայն
'Ի ծնէ անտի մինչ ցայս վայրկեան։

Միշտ մեղսածին խոկմունք և վարք,
Մոլի, վատ գործք, չարալիր բարք,
Պարծանք սնոտի, դիւրափոխ փառք,
Էին 'ի կեանս իբր անշուշտ հարկ։

'Ի դեւահաս տիս մանկութեան,
Կարօտ խրատուց կամացս խափան,
Ազատ, անխոհ թարց ուղղութեան
Անցուցի զամս յանհոգութեան։

Թերի մտածմունք, միտք էր իմ խակ,
Զբօսանք, զբաղմունքս անշահ համակ.
Նոյն խաղալիքս, բանք բովանդակ
Էին ամացս բերք դժնդակ։

Ոչինչ դիպուած, խորհուրդ, խըրատ
Ոչ կարացին մաքրել զարատ
Հոգւոյս, լինել ցաւոցս փարատ,
Որ միշտ տանջէր զիս անընդհատ ։

Իսկ երբ հասի յարբունս ամաց,
Նախնին էր իմ կանոն կենաց ․
Ըստ առաջնոյն բերմամբք մեղաց
Անկայ յանդունդս նոր փորձանաց ։

Ցնդեաւ զհետ չարեաց կըրից,
Թուէր բարուոք վարքս հեշտալից ․
Կէի հեւի յողջախոհից ․
Փախստական միշտ յաղօթից ։

Իբր զի՝ զարթնոյր խիղճ՝ իմ մըտաց,
Վայրկեան մի եթ զիմ յանցանաց
Խորհեալ, կրկին ստուեր մեղաց
Օրինև պատէր խաւարամած ։

Յաճախ դժբաղդ ինչ դիպուածով
Սուզէի խոր խոկմանց 'ի ծով ․
Այլ այս դրութիւն, սրտի գորով
Անցանէին կարի փութով ։

Իւր զի՝ մեղաց դատն յիշատակ
Յուշ ածեր ինձ հեք զիմ վիճակ,
Նոյնժամայն յիս ծնանէր փափագ,
Ուղղել վարուցս զամէն վրիպակ ։

Մինչ տանջէի զգածմանց 'ի շփոթս,
Ջան դնէի կալ 'ի յաղօթս ։
Բայց չար ոսոխս մեղաց յանօթս
Հեղոյր անդէն ժանգ ժահահոտս ։

Իսկ թէ երբեմն 'ի դէպ լինէր
Ինձ ընդ բարի յարել ընկեր,
Զարն այն խստիւ 'ի սիրտս ձմլէր,
Փոխէր զսուրբ զիմ առ 'նա սէր ։

Իմ բոլոր հոգ էր զմարմնոյ,
Զհեշտութեանց աշխարհայնոյ ։
Ինձ ոչ թուէր բընաւ պիտոյ՝
Խոկալ զահեղ զօրէն վերջնոյ ։

Ընցողական աստի բարիք,
Պգուանք, բերկրանք և ճեմելիք,
Նոյն հասանիլն փառաց իմիք
Թուէին ինձ հոգւոյ կարիք ։

Սի՛ն ճոխութեան, յընչից վերայ
Զուր կապէի յոյս զապագայ ։
Սակայն և յայնմ ես խաբեցայ ,
Զի և նոքին չե՛ն մշտակայ ։

Զբաղեալ հարկիւ իմ պաշտաման ,
Թողի հոգւոյս զպէտս , դարման ։
Հանգիստ , հրճուանք , կեանք մոլեկան ,
Կարծէի ինձ 'ի շնորհս տուան ։

Ամսոց , աւուրց , ժամուց շրջան
Դառնայր դարուց 'ի շտեմարան ·
Բայց ո՛չ գոյր յիս միտք խոհական ,
Գիտել թէ՝ այնք վասն իմ կորեան ։

Յերեսնամեայ այժմեանս հասակ
Հազիւ յուշ ած զիմ հեգ վիճակ ·
Կորուսի ես վարձուց պըսակ ,
Յղեալ միայն մեղաց մըշակ ։

Ո՛չ աստիճան , ո՛չ փառք , պատիւ
Կարեն շրջել կենացս զանիւ ·
Ո՛չ ես աշխարհ իւրով լրիւ
Զօրէ առնել զամն փոքրաթիւ ։

Անցին նոքին, իսպառ կորեան,
Յանդարձ դարուց մէջ թաղեցան ։
Իսկ ես թշուառս աւանց զղջման,
Մինչ ցարդ մընամ յանհոգութեան ։

Ոչ կարծելով վաղ, անմագան,
Բաժին և ես եղէց մահուան,
Այլ թէ նախ քան զկենաց վախճան,
Պարտիմ գտանել դեղ փրկական ։

Ապա ուրեմն՝ անձն իմ թշուառ՝
Յուշ լեր ինքեան, թող զվարս վատթար ։
Մուտ, երթ ուղիղ ընդ Ճանապարհ,
Ընդ նեղ անձուկն քեզ փրկարար ։

Թող զարհամարհ սէր աշխարհի,
Զփառս, պատիւ, բարս հեշտալի,
Մի՛ ևս յանհոգս զքո հոգի
Ունել չարեաց կըրից գերի ։

Ընտրեա՛ զ չարն և զբարին,
Զանարժանըն և զարժանին,
Զաշխարհային և զերկնային,
Զամեն անպէտն և պիտանին ։

Լե՛ր ճիշդ անմենգ, հեզ, մարդասէր,
Որպէս քո զանձն սիրեա՛ զընկեր,
Սիրեա՛, մի՛ ես զոսոխդ ատեր,
Յիշեա՛ Փրկչիդ զսուրբ պատուէր ։

Մի՛ ես յուսար յընչից մթեր,
Յոսկի, յարծաթ, զորս դու գտեր ։
Անցցեն նոքին որպէս զստուեր,
Կամ որպէս ծուխ անհետ յայեր ։

Գանձեա՛ զգանձդ, մինչ ողջ աստ կաս՝
Յերկինս, ուր մնայ այն անվնաս,
Գողոց անյայտ, ցեցից անհաս,
Անվերջ, անհատ զօրհանապազ ։

Քննեա՛, ո՛ աստ չե՛ղև մահուան
Հլու, գերի · ո՞վ է իշխան
Կենաց իւրոց անմահութեան,
Ո՞յր և մնայ բաղդն անվախճան ։

Թո՛ղ զամենայն, յուսա՛ ՚ի Տէր,
Կա՛լ հաստատուն առ նա զսէր ·
Խնդրեա՛ ցաւոցդ դեղ անվեհե՛ր,
Մի՛ ըզքո յոյսդ իսպառ կորեր ։

Նա՛ է դուռն քո փրկութեան ,
Աղբիւր կենաց , ողորմութեան ։
Գթոյ նորա չի՛ք չափ , սահման ,
Նմա պատիւ , փառք յաւիտեան ։

## ԾԱՂԻԿ .

Անցեալ գեղ , զարդ դաշտաց ծաղի՛կ ,
Ըն՞ր թառամեալ՝ ես չոր , միակ ։
Ո՞ւր նախկին քո գոյն գեղեցիկ ,
Թարմ , գեղաղէշ ոստք երփնորակ ։

Ճիմ քաղցրախորժ հոտդ , անուշակ
Փութով էանց , եղև անհետ .
Ո՞ւր և տերևքդ գունակ գունակ ,
Զոր վա՛ղ առատ բնութիւնն քեզ ետ ։

Ասա՛ , ասա՛ զի՞նչ է պատճառ ,
Օ՞դ ամարան , խիստ տօթ , խորշակ ,
Թէ սաստիկ հո՞ղմ աշնան արար
Զուրկ 'ի գեղոյդ այսօրինակ ։

Ո՜հ, մի է մեր ընդ քեզ վիճակ,
Մի և օրհաս, որ այժմ քեզ հաս.
Քո թափեցան տերևք համակ,
Նա այս օրհաս չէ՞ վաղահաս։

Նոյնպէս մեր կեանք է փութանցիկ,
Բերմունք նորա խիստ դառնօրակ։
Մեր և անցցեն համայն բարիք,
Խլէ զկեանս մահ դժնդակ։

Դու գաս 'ի լոյս, աճիս, պճնիս,
Քո սահմանեալ է ժամանակ.
Նա թառամիս, գունով փոխիս,
Երբ դառնաշունչ գայ եղանակ։

Քո երևիլն և կատարած
Են առ յամէ 'ի մի տեսակ.
Իսկ ամէն օր, ժամ մեր կենաց
Մերձ են առ մահ բազմօրինակ։

Չէ՞ մեր յայտնի կենաց սահման,
Ո՛չ ոք գիտէ զիւր ժամանակ.
Ընժամ յանկարծ մեզ յառաջ գան
Բիւր ցաւք, փորձանք, ժամք ձախողակ։

Ո՛չ լեր ծաղի՛կ հեզ, գեղազուրկ,
Մի՛ վհատիր յայլ ես նուագ,
Տացին բնութեան անհատ քեզ տուրք,
՚Ի գալ գարնան զարդ փայլունակ։

Թո՛ղ ողբասցուք մեք զդժբաղդ,
Աղետալի զմեր վիճակ,
Զոր փոխարկէ, շրջէ մահ գա՛ղտ
Անմա՛ն, յանկարծ յամէն նուագ։

Թո՛ղ խառն ալեօք և ես կենաց
Տատանեցայց ծովուս յարձակ ·
Հասցէ այլ և իմ կատարած,
Վաղ կամ յետոյ եղէց ճարակ։

Ո՞հ, ո՞վ կարէ ասել անսխա՛լ,
Կե՞անք թէ ծաղիկ զիւր զտեսակ
Փոխէ և կամ անակնկալ,
Անհետ ՚ի հող դառնայ համակ։

## ՄԱՆՈՒԿ·

Թո՛ղ զմայլեցայց գէթ սակաւիկ
Քեւ իմ գողտրիկ մանուկ փափկիկ ։
Խոստովանիմ, ես նախանձու
Հայիմ 'ի քեզ յամէն պահու ։

'Ի քուն լինիս անդորր անխռով,
Եւ 'ի ննջելդ ես ապահով
Դու յանձկութեանց, դառն աղետից,
Տիւ և գիշեր ինձ ծանօթից ։

Երբ դու շարժնուս՝ մերձ գան հապճեպ
Լի խրախանօք քնքուշ, անվէպ
Հայր և մայրիկդ, զքեզ լիզեն,
Յիւրեանց ձեռաց վերայ գգուեն ։

Երբ տեսանեն զմեղմ ժըպտիտ,
Քո հայեցուած զուարճ վճիտ,
Ամենեքեան քեւ պարապին,
Քեւ սիրտք նոցա ցնծան, հրճուին ։

Օ՛ քո հոգի խռովել յերկար
Միշտ , դառնութիւն են միշտ տկար ։
Գգուեն զքեզ սիրով ամոք ,
Երկին կայտառաս , խնդաս անհոգ ։

Յաճախ արտօսրք ջերմիկ հոսին ,
Եւ սիրտք դողան ծնողաց քոյին ․
Իսկ երբ շրթունք քո ծիծաղին ,
Ո՛վ քաղցր, աննենգ տեսլեանս անգին ։

Նման աւուրք քո վաղ թուանին ,
Հասցես յարբունս դու հասակին ,
Փորձանք և կիրք զքեւ պատեսցեն
Ոսկեայ տարիքդ ՚ի չիք դարձցին ։

Նա՛խ, փորձով իսկ գիտեմ ես ճիշդ ,
Ո՛րչափ զառուս արտասուաց միշտ
Հեղլի, հեղում, և ակամայ
Վռանի՛ վշտաց , տանջից տարայ ։

Տեսի բազմաց մահ սիրելեաց ,
Դժրանս , զաղետս , վիշտ ընկերաց ․ ․ ․ ․
Ես ՚ի խոկմունս յաճախ վհատ
Խնդրէի զմահ ինձ անընդհատ ։

Արդ՝ քեւ խրախոյս, կայսմ հեւաէ
Թէ ժամ ձանձիր յառաջ ելցէ
Ինձ՝ ես մերձ քո օրօրոցի
Գիւրեցից զիմ սիրտ տխրալի։

Այսպէս՝ խըրախ գիծք քո դիմաց,
Քո հանդարտիկ, քաղցր հայեցուած,
Հեղցեն յիմ կուրծս զխնդութիւն,
Ցրեսցեն հոգւոյս խաւար համբուն։

Անմեղութիւն, դու ձի՛րք վերին,
Բաշխես սրտից դեղ բուժելին։
Գէ՛թ առ վայրկեան կարճ փութանցիկ,
Եղէ և ես անմեղ այժմիկ։

Եւ խնդութիւն զիմ կորուսեալ,
Յիմ սիրտ թշուառ զգամ դարձեալ։
Ո՛ իմ հրեշտակ առ ժամն անկարծ
Նորոգեցեր զանցեալն անդարձ։

## ՏԱՐԵՄՈՒՏ։

՚Ի գալ նոր աւուրց, նոր կեանք հրճուանաց
Հասցէն տառապեալ գերւոյս Թախծանաց։
Խստութեան հնոյն փոխան, նորն կրկին,
Տացէ տեսանել զժամն առաջին։

Յայնժամ զանջատեալս յինէն յանցեալ ամն
Տեսից զծանօթս, զընկերս բարեկամն։
Եւ զոր հինն բռնի՛ զրկեաց յինէն բարձ՝ —
Ինձ հանդիպեսցի նորովս վերադարձ։

Մինչ ցնորս յերկար ձանձիր անջատման,
Թուէր ինձ տարին իբրու մի վայրկեան
Ո՛չ գոյր յանձկութեանս ոչինչ բերկրալի,
Աղէտ գլխովին նեղէր զիմ հոգի։

Հոգւոյս մերկանալ զվէրս չէր հնար,
Ինձ ամենեքին Թուէին օտար։
Ահա առնու նոր զպատկեր կեանք իմ,
Վերստին տեսից զընկերս մտերիմ։

Զընկերս ես գրկեալ սիրով հոգեկան,
Զիմ համարեցից զկեանս անվախճան.
Յայս իսկ խնդութեան 'ի նոր վիճակի,
Անցցէ վասն իմ ամ վաղ քան զժամ մի.

'Ի ժամ մի սուրբ սէր, կամք և բնութիւն,
Կցեալ ընդ միմեանս մեր զսիրտս համբուն՝
Անլոյծ կապանօք հարկադիր լինին,
Սիրել միշտ զիրեարս մինչ ցկէտ կետին.

Յետին կէտ մահու թող դիցէ վախճան
Զգացմանց սրտից մերոց ստորական.
Բայց տեսոյ միմեանց և 'ի կեանս վերին
Հասցուք զօրութեամբ սիրոյ մեր ջերմին.

Զսէր ջերմեռանդ թող հռետորք արդեան
Գովեսցեն յիւրեանց յերգս ճոխաբան.
Ես զիմ ընկերաց սուրբ սէր առանձին
Երգեմ անպաճոյճ, հանդարտիկ, լռին.

Լռեմ, բայց 'ի միտս խօսիմ ընդ ընկերց,
Խնդամ հոգւով նոր ընդ ամ առ մեզ մերձ.
Մե՛րձ է ահա՛ Տէ՛ր նոր ամ խնդութեան,
Տո՛ւր մեզ վարել զայն, որպէս է արժան.

Արժանի վարուք , սուրբ կենօք անմեղ ,
Գտցուք մեր հոգւոյ խօթութեանց զդեղ :
Սիրելով զընկերս ըստ քում հրամանի ,
Խոստացեալ փառաց լիցուք արժանի :

---

## ԱՅՑԵԼՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ

### Ա.

Դիւրասայթաք կեանքս աղցաւոր
Չ՚տայ մտածել քեզ անցաւոր
Զմիւս կենացըն փառաւոր ,
Ուր են և տանջք խիստ ահաւոր : —
Թէ կեաս ՚ի կառս ես թագաւոր ,
Հարուստ ՚ի փառս կամ զօրաւոր ,
Կամ անկարօտ Ճոխ բաղդաւոր՝
Հողոյ ծնունդ ես հիւթաւոր ,
Յոր փո՛յթ դարձցիս ո՛չ կամաւոր ,
Անանց կամօքն Հօր երկնաւոր :

Անգութ մահու ես դու բաժին ,
Այսօր կամ վաղն կենաց քոյին

Լեցի յանկարծ վախճան խոտին :
Զի՛ք քեզ հընար զժամ յետին՝
Յոր յայց եկցէ հիւրն ահագին՝
Գընել , փոխել 'ի կեանս կրկին ,
Թէ և տացես զաշխարհ 'ի գին :
Անդա՛րձ , անժամ անցցէ բնաւին
Կեանք և ամէն քո բաղձալին ,
Յոր աչքդ յայժմուս սիրով հային :

Որո՞յ փափագ ասա միշտ լըցաւ
'Ի կեանս անմահ կեալ դատեցաւ :
Ո՞ անարատ , անփորձ , անցաւ
Մ՝ընալ կարաց , ո՛չ փոխեցաւ :
Ո՞յր և ընչից ժողով անբաւ ,
'Ի վայելումն անդուլ տուաւ :
Որո՞յ փառաց , պատուոյ համբաւ
Ո՛չ յապագայս յօչինչ դարձաւ :
Այո՛ չէ՛ք ոք որ պարմանաւ
Մահու զհետ ո՛չ քարշեցաւ :

Ապա՝ խորհեա՛ց ճիշդ մտադիր
Ո՛վ անցաւոր, մի՛ 'ի նանիր
Յուսար 'ի փառսդ հարստալիր :
Խորհեա՛ց զաստեացս , մի՛ անխտիր
Սիրեր այլ ևս զաշխարհ պատիր ·
Լե՛ր ջանահնար դու անձանձիր ,

Սարեւ զկեանսդ միշտ անբասիր ։
Զչարն, բարին քննեա՛, ճանի՛ր,
Դի՛ր զանձդ յերկի՛նս, առեա՛ զերկիր,
Որով գտցես փառս զերկնաձիր ։

## Բ ։

Դառնաս աստէն էր դու ճեպով,
Ո՛ այցելու դիմօք խորով,
Մի՞թէ վայրիս տխուր տեսով
Քո փոխեցաւ սրտի զօրով ։

Զի՞նչ էր գալուստ, ասա՛, պատճառ
Յայս ննջարան տրտում, մթար,
Թէ լայց եղեր մեզ կամակար,
Ե՞ր ապա այդ դարձ փութաբար ։

Կա՛ց, մի՛ փախչիր, աստ երկիւղ չի՛ք,
Ո՛չ վիշտք, արկածք, ո՛չ դէպք սաստիկ ·
Աստ ընդ հողով նինջ հանդարտիկ,
Յոր կամք անշա՛րժ, լուիկ մնջիկ ։

Կա՛ց աստ ժամ մի, մի՛ շտապեր,
Ա՛ծ զմտաւ, տե՛ս ո՞ւր եկեր ·
Մի՛ լինիր դու անկարեկիր
Ընդ քուն խորին մեր անյարիր ։

Զե՛ք առ ՚ի մէնջ շահ, ո՛չ վրնաս,
Աչ ես իշխէ մեզ աստ օրհաս ·
Անցեն ընդ մեզ անցք վաղահաս
Ընդ սահմանեն կամացն անհաս ։

Անդարձ են մեր ելք ՚ի կենաց,
Մեր ողջ հասեն ՚ի կատարած ·
Նուանդ տիոց, իղձք սրնոտեաց,
Վաստակ մարմնոյ, տագնապք մրտաց ։

Աւուրք ՚ի կեանս սակաւ տուան,
Եւ այն վշտօք լի բազմազան ·
Փաւք մեր գտեալ գրնոց քրտան
Դարձան ՚ի չիք անդարձական ։

Միշտ ձգեաք անդուլ փութով
Գրաւել անձին յագուրդ լիով
Զգանձս, տիտղոս պատուոյ զգով
Յանմիտս զմեր լրնուլ զսով ։

Ոսկի, արծաթ քրտանց վաստակ,
Ծնունդ հողոյ դեղին սպիտակ,
Զոր սիրեաք մեք սերտ անյագ
Բարձան 'ի մէնջ յանյոյս նուագ։

Ստացաք զփառս, զաւագութիւն....
Բայց ո՞ւր նոքին 'ի գալ մահուն·
Աղքատ իշխան, ճոխ մեծատուն
Դարձաք 'ի հող խորին 'ի քուն։

Ացորդք չարեաց յանձանց վնաս,
Այրք յընտրութիւն, բնաւին տհաս,
Մարմնոյ և եթ արկաք սպաս
Ընդէտ անցիցս այս նախահաս։

Շատ պատահարք, աղէտք դաժան,
Ընթացակից մեզ անբաժան,
Գլորեալ ապա 'ի կէտ վախճան,
Ընկէն զմեզ 'ի փոր մահուան։

Ո՛չ իմաստուն և ո՛չ հսկայ
Զի յաշխարհի տեսի, լուայ՝
Յասպարիզի, ուր մահ ներկայ,
Ճ՛ակատ մըղել կարաց անձ՛ն։

Ա՛խոք, ով մարդոյ ոչ մարթանայ
Ո՛չ բազմահնար ինչ մեքենայ
Ապրել 'ի սուր նետից դժնեայ,
Զոր արձակէ մահ հինօրեայ։

Լ՛ակք համայն վա՛ղ, անագան
Ճ՛արակ մահու են անխափան,
Նորայն ուժով անյաղթական
Յաղթեալ 'ի սպառ անկցին կործան։

Աշխարհ քաղցրիկ գաղտնի նետիւ
Դնէ հարուածս զցայգ և տիւ ·
Սուտ զգուանօք, կեղծ արհեստիւ
Պատրէ զմարդ անյայտ կարթիւ։

Մ՛ինչ զթակարդ լարէ մարդոյն,
Արէ յիւր դէմն գեղեցկութիւն,
Զանէրևոյթ վիհ խորագոյն
Գողաբարոյ պեղէ համբուն։

Խաբիս ո՛ մարդ։ Ու նպատակ
Մ՛է՛ ես բերիր դու փառունակ ·
Դո՛ր քո զջանս եռափափագ,
Զանհատ փառացն աւնուլ ճաշակ։

Նստեմն օրհաս անագորոյն
Երբէ զմահ գողոյ համգոյն ·
Ուստի թո՛ղ խնամ դու զմարմնոյն ,
Հո՛գ տար զանմահ քո զհոգւոյն ։

Զերթ ծուխ յանգայտ յօդս ցնդի ,
Նոյնպէս և սուղ կեանք սպառի ,
Նոյնպէս պատիւք , փառք աշխարհի
Լինին անհետ յանկարծակի ։

Մի՛ ևս զաշխարհ սիրել ուսցիս
Թո՛ղ և ատեա՛ ըզմնոտիս ։
Մի՛ ևս դիցես զյոյս յաստիս ,
Յոր այժմ մոլեալ դուդ յիմարիս ։

Երկրանք , գգուանք , խնծիղք համակ ,
Հեշտանք կենաց , զանձուց կուտակ
Տածեն 'ի խոր ժանտ դժնդակ ,
Զանյայտ 'ի սիրտ խոց անձարակ ։

Զի՞նչ այդ հասակդ գեղածաղիկ ,
Եւ զի՞նչ խրախանք քո բերկրալիք ,
Երբ հեշտ փոխին , են խաբուսիկք ։
Սահին սրընթաց իբրու ալիք ։

Զի՞նչ շահ քեզ յայդ կենաց անպէտ,
Յոր չ՛իք անդորր խաղաղաւէտ,
Այլ որ զքո սիրտ, միտ յաւէտ
Ծփեն խստիւ ծովու համգէտ ։

Դժուար են ելք քո ահաւոր,
Դժուար ուղիղ տարժամաւոր ·
Հասցէ և քեզ անկումն ՚ի խոր
Ընգուլթ մահուն յանյագ ՚ի փոր ։

Կեաս դու այժմուս յուրախութեան,
Գովես զկեանսդ լիաբերան ·
Բայց կեանքդ այդ ունի դաժան
Զանբերելի բեռինս յապայն ։

Տէր և ծառայ ես դու իշխան
Օգտից երկրի բերոյ, արդեան ·
Բայց աւա՜ղ, զի մընայ անծան
Քեզ այդ վիճակ դիւրակործան ։

Շա՛տ են վայելքդ, բայց ո՛չ ուսար,
Թէ քանի՛ծն ես հէք, տըկար,
Մոլորութիւն, մեղք և խաւար
Այն առանձին կենացդ նկար ։

Որդ՝ զայս ամէն դէ՛ր 'ի կըշիւ ,
Զչար , բարե՛ն իմ , ուսե՛ր ·
Բե՛ր և 'ի միտ , ճիշդ դու ծանե՛ր
Զաւուրս գալոց թշուառալեր :

Հայեա՛ց 'ի մեզ , մի՛ երկնչիր ,
Յաչս դնել զմահ ուսի՛ր :
Եւ զքեզ մերկ ծնաւ երկիր ,
Եւ քո վայելք փառք են նանիր :

Կեանք քո պատիր են վաղանցիկ ,
Չեն 'ի պատուի բարեբաստիկ ·
Գործք եթ բարիք դերապանծիկ ,
Ունեն զմարդ բարերջանիկ :

Ո՞ մնաց անմահ , մեր և նախնիք
Մահու վճռոյ ատեն զկնիք ·
Բայց երանի՛ որոյ բարիք
Լին սուրբ գործք առաքինիք :

Ո՞պ մի՛ լինէր կոյր զաչացու ,
Թո՛ղ զվայելչ գարշ վնասատու ·
Յիշեա՛ , զի դու ես մահացու ,
Ճարակ մեղաց , գերի մահու :

Մի՛ զանձն քո այլ ևս տածեր ,
’Ի կենցաղոյս գրգանս խաբեր ։
Գեղեցիկ է վարդ յաչըս մեր ,
Այլ ունի նա փուշ դառնաբեր ։

## ՀՐԱՒԷՐ ԱՌ ԸՆԿԵՐ ·

Զո՛ւր կեաս դու ’ի քաղաքդ՝ ո՛ ընկեր անըզբաղ ,
Զո՛ւր զայտի սիրես կեանս զտաղտուկ և դանդաղ ·
Թո՛ղ զաղմուկ քաղաքիդ , ե՛կ յաւան անյա՛պաղ ,
Ե՛կ ընդ իս վայելել յաստի կեանս միշտ խաղաղ ։
Ե՛կ և տե՛ս զյորդաւատ աստ բնութեան ձիրս չքնաղ ,
Ուր չէ՛ք բնաւ խիստ ձանձրոյթք, այլ տիրեն խաղ, ծիծաղ ։
Այր և ո՛չ երևին ոխ , ոձիր , կատակ , ձաղ ,
Քա՛ղցր է աստ քան զծաղ և չոր հաց ’ի մախաղ ։
Այդր են տօթ, տապ վառեալ, աստ քաղցրիկ հով և պաղ ·
Ի՛նչ անոյշ հողմ, այեր, շաղ , անձրև մանրամաղ ։

Զաննման գեղեցիկ աստ դացես զգարուն ,
Զվայրըս ծաղկաւէտ, զարդ բնութեան պատարուն ,
Զայգիս խիտ ծառազարդ , զյորդ գետս կարկաջուն,
Եւ զըոյս բիւրաղան , զծաղկունս գիրգ սիրուն ։
Տեսցես աստ ցուրտ զաղբիւրս, զհովոցս յարդարուն ։
Զանդս, ածուս, բուրաստանս, դաշտորայս զարդարուն ։

Ե՛կ քաղեմ, փունջ կապեմ 'ի ծաղկանցս վայրասուն,
Ընծեմ սէք զանուշիկ, զոր չնչեն սարք անհուն :
Ե՛կ ճեմեմ աստ յուշիկ առ վտակօք փաղփաղուն,
Մոռամ զանցս տխրալի և յանդորր մուտ 'ի քուն :

Բա՛ց քո զաչսդ, եկ 'ի միտս, փութամ եկ յայս աւան,
Եւ գլխով յորդ աղբերց, աստ հա՛ր քեզ զխորան,
Ե՛ւ ցրտին յայնցանէ մ՛րք զջուր սաւնական,
Զովացո՛ զեւանդնոտ քո պասուք տապական :
Ճե՛մ արա յուռճազարդ խոտոց մէջ յանդաստան,
'Ի հովիտս հովանուտ, 'ի մարմանդս ողջական,
Յընդարձակ խուռնախիտ դալարիս զովական,
Ուր անթիւ են նարդոս, մանուշակ, վարդ, շուշան :
Ո՛հ, քանի՛ վայելուչ են աստ բերք բընութեան,
Քանի՛ հոտք անուշից զմայլել միշտ մեզ տան :

Ե՛կ և տե՛ս զխաշինս 'ի լերինս ցիր և ցան,
Որք ջայլէն, արածէն, բառաչէն անսասան :
Աստ դաշտին և ձկունք 'ի կայտիռ որք խաղան
'Ի վտակս յորդ 'ի գետս յանհամար բազմութեան :
Նո՛յն 'ի թռիչս խուճապին և թռչունք բազմազան .
Եւ անթիւ հոյլք հաւուց ընդոստնուն, թըռթըռան .
Գո՛ն և աստ արօտք, խոփք դիւրութեան պէտ մարդկան,
Աստ հնձողն գերանդին, առեալ գայ յանդաստան,
Համակաթուա զցորեան, զոր ցանեաց 'ի հերկման`
Ժողովէ 'ի համբարս 'ի վայելս ձմերան :

Ի՛հ, զամէն դիւր, վայելս աստի չէ՛ ինձ հնար
Մի առ մի առբերել քեզ ՚ի ցոյց ՚ի նըկար.
Գործ է այս արդարև ոչ գրչի իմ տըկար,
Այլ հրմուտ ճոխ լեզուի պերճաբան և ճարտար:
Ես միայն գո՛հ, հաւան ընդ իմ կեանս դիւրավար,
Շատ ինձ աստ համարիմ զաղքատիկ տաղաւար.
Անպաճոյճ, հե՛շտ է յոյժ իմ ապրուստ մխիթար,
Ուտիմ ես զսեղան ըստ կամաց յար յօժար.
Զկերլեաց, զգենլեացս ոչ ունեք տամ համար,
Երբ կամիմ, քուն լինիմ և զարթուում կամակար:

Չի՛ք ոսկի աստ կամ գանձ թաղեցեալ ընդ երկրաւ,
Բայց բղխին ՚ի հողոյ առատ բերք ոչ սակաւ:
Պերճ ուտեստք զեղխութեանց ոչ տիրեն աստ տակաւ,
Այլ ցորեան, իւղ, գինի, միրգ, ձէթ, մեղր են ամբաւ,
Միւս արդիւնք դիզանին ՚ի մըթերս համբարաւ,
Զոր բերէ անծեր հողն անգըրաւ ճիշդ կարգաւ:
Ո՛չ պարծի ոք փառօք և զարդու հարստաւ,
Այլ յանփոյթս, անտրտունջ զգենուն զկըրտաւ:
Չի՛ք աստ քէն, նենգ, պատրանք, կշտամբանք և ոչ դաւ,
Պա՛րզ, ուղիղ կեանս, չարիս ոչ ածեն զմըտաւ:

՚Ի նշան սերտ սիրոյ, ո՛վ անդին իմ ընկեր՝
Բարեհաճ մտադիր ընկա՛լ զայս հըրաւէր:
Ո՛չ յղի այն լինէն քեզ ՚ի խըրատ և պատուէր,
Այլ, կրկնեմ, սիրաշարժ բերի քեզ ՚ի նուէր:

Սրտեւանդն ըղձանօք ա՛նկեալ անհամբեր
Մնամ ես տեսոյ քո քաղցրիկ և քաջալեր ։
Ե՛կ փութով , թո՛ղ զայտի զաղմուկ , կեանս փափկասէր ·
Մի՛ մնոտի դու յուսով՝ յօտար կոյսըն խուսեր ,
Մի՛ զանգի՛ն ըզհանգիստ քո անձին զուր զոհեր ,
Ե՛կ՝ հանգի՛ր և խնդա՛ աստ զտիւ և գիշեր ։

ԵՐԳ ։

Զիա՛րդ մարթի տանիլ վշտացս
Հեգ և թշուառ անճար անձն իմ ։
՚Ի հայրենեացս , ՚ի սիրուհեացս
Վայ յանջատման օտար անձն իմ ։

Չի՛ք ընաւ յոյս յընկերակցաց ,
Կեանք իմ անցցեն ՚ի մէջ վշտաց ։
Բոլորք ունին խրախճանս կենաց ,
Իսկ դու անգործ գտար ա՛նձն իմ ։

Մի՛ ևս տենչար զուարճալեաց ,
Թո՛ղ դու զաստիս , հրաժարեա՛ց ·
Զի չ՛տան հանել շունչդ ՚ի բաց ,
Յորմ անզգայ դարձար ա՛նձն իմ ։

Մ՛է հառաչէր զո՛ւր ընդունայն ,
Չե՛ք լոյս կենացդ միանգամայն ։
Ո՛չ գոյ բժիշկ , ո՛չ դեղ դարման
՚Նմանեաց քեզ՝ տկար անձն իմ ։

## ՍՈԽԱԿ ։

Ողջունեմ զքեզ սոխա՛կ իմ սոխա՛կ ,
Բարեա՛ւ քո գալուստ՝ քաղցրախօս սոխա՛կ ։
Ո՛ւր թագչէիս արդեօք , ցո՛յց ինձ տեղի զայն ,
Ո՛ւր թռչէիս , երգես միշտ 'ի գիշերայն ։

Դու իմ երկնաբնակ հիւր ընտիր , անգին
Տուար 'ի վերուստ 'ի ժամս դառնագին ,
Երգել քաղցրաձայն յիմ գլխոյ վերայ ,
Դիւրել հոգետանջ զիմ ցաւ հինօրեայ ։

Լքեալ , յուսահա՛տ երբ ես միայնակ ,
՚Նստիմ և ողբամ զիմ թշուառ վիճակ ,
Յանկարծ երևիս զերթ աւետաբեր ,
Երգես քաղցրալո՛ւր ձայնիւ քաջալեր ։

Ոլորուն երգով քո միշտ մխիթար
Բառնան յիմ սրտէ աղէտք վշտահար ։
Ունկնդիր ձայնիդ իմ վհատ հոգի
Զուարճ զգացմամբ փոխի նորոգի ։

Ո՜վ է ինձ համգոյն թշուառ վատաբաղդ ,
Ո՞ տանջի այնչափ , և ո՞յր հոգւոյ ախտ
Կարէ ընդ իմոյս լինել հաւասար ։
Ո՜վ անկարեկից ցաւոցս չարաչար ։

Թռուեա՛ց ուր կամիս՝ քաղցր իմ երգեցի՛կ ,
Երգեա՛ անընդհատ ձայնիւդ դայլայլի՛կ ·
Բայց դու ո՛չ գտցես , չի՛ք և ո՛չ ա՛յլ մի՛ն ,
Որ զերթ զիս լալով լուիցէ քո ձայնի՛ն ։

Ե՛րթ 'ի գիւղս , քաղաքս և յաշխարհ համայն ,
Կորիցեն քո եթ վաստակք ընդունայն ·
Զի չի՛ք յարարածս նման ինձ գերի ,
Կարօտ գալըստեանդ , ձայնիդ ծարաւի ։

Ես միայն յալիս տանջանաց ծփիմ ,
Մե՛րձ է 'ի կորուստ դառն անյոյս կեանք իմ ։
Դու ինձ եթ տուար քաղցրիկ իմ սոխակ ,
Քո ձայնիդ լսեմ ես միայն անյագ ։

Ապա՝ աղաչեմ, մի՛ անտես առներ
Զ՛իս միակ գերիդ 'ի ցաւս անըմբեր .
Յայց եւ ինձ յաճախ, Ո՛վ Հիւր աննման,
Երգեմ անդադար դու անե՛րկևան :

Մ՛ի ես հեռանար դու և գիշերայն,
Մ՛ի թողուր սովոր զտեղի քո ձայն,
Ուր նստեալ վհատ ձայնիդ ես կարօտ՝
Յանկամ բուժել զիմ երգովդ սիրտ ցաւոտ :

Ե՛ր դու իմ խնդրոյս միշտ հաւատարիմ,
Զ՛ի չէ՛ք ոք վասն իմ ընկեր մտերիմ .
Բայց 'ի քէն չունիմ զայլ մխիթարիչ,
Յաւոցս փարատիչ, սրտիս զմայլիչ :

## ԹՌՉՆԱԿ :

Ս՛աղ քաջ քան զամէն զարթնում և յառնեմ,
Ը՛նդ այգս այգուն առ Տէրն իմ երգեմ :
Ն՛ա զիս կերակրէ, ես ո՛չ սերմանեմ,
Ո՛չ հնձեմ, կասում, սակայն միշտ յագ եմ :

Սիրեմ զգարուն, յեղանակ նորուն
Լինիմ ես կայտառ, խրախ, զուարթուն։
Ունիմ զիմ տնակ 'ի մարգս զարդարուն,
Բայց բնակիմ և յօդս 'ի բարձունս անտուն։

Իջանեմ անտի և ստորև յերկիր,
'Ի յանդս, դաշտորայս, հովիտս ուռճալիր.
Եւ 'ի մէջ ծաղկանց, թփոց անխտիր,
Անքոյթ և յանհոգս ճեմեմ անձանձիր։

Մերթ տանիմ, խաղամ, լինիմ ես անհետ
'Ի վերայ գետոց արագ զերթ զնետ,
Մինչև ոչ կարել հասանել զիմ հետ
Եւ ոչ արագոտն ձիոյ սըրամէտ։

Այսպէս ինձ տուան կեանք ազատ արձակ,
Զերծ 'ի վաստակոց, միայն յանդաստակ
Մատնիմ 'ի կորուստ անկեալ 'ի ծուղակ
Վասն անարգ, փոքրիկ հատկի եթ միակ։

## ԽՕՍՔ ԸՆԴ ՄՈԽԱԿԻ ։

Որպէս դու յանդորր մայրւոյ խաւարին ,
Քաղցրահեղ , համբոյր սոխակ ծանրագին ։
Որպէս առ լուսով մթամերժ լուսնին ,
Ձայն , ախորժ լսի ձայն քո իմ սրտին ։

Բայց հիմ գետօրէն աղբիւրք արտօսրին
Քամեալ յիմ աչաց առատ հեղանին ։
Ո՛հ , իմ զգայութիւնք նեղին , խոշտանգին
'Ի քոյդ գեղգեղեալ ձայնէ քաղցրագին ։

Բա՛բէ , անմոռաց ինձ 'ի յուշ եկին . . . .
Թաղեալ 'ի խաւար ծոց խոնաւ երկրին ,
Զորս անդէն արար մահ ինքեան բաժին ,
Եւ որոց շիրիմք մամռապատ ծածկին ։

Ես միայն մնացի որբ , հէք վշտագին ,
Զրկեալ յընկերաց , անյոյս գլխովին ,
Մնացի կեալ յաղէտս յանձկութեան դառնին ,
Թախծիլ , մրմնջիլ , ողբալ տխրագին ։

Այժմ ընդ ձում արդեօք է ինձ հընարին,
Զմայլիլ քաջոլոր երգովդ սիրային,
Եւ զի՞ մխիթարիլ բնութեամբ իմ անձին,
Այն զի անընկեր մընայ առանձին ։

Ընդ նոսին զմահ զգենու մեր հոգին,
Խնդութիւն կենաց վերանայ բնաւին ․
Միայնակ սիրտ անձկայ, նեղի սաստկագին,
Լոյս թուի նմա մութ խաւարչտին ։

Այլ, փութով արդեօք երգովդ քաղցրային,
Ո՜վ հիւր օդապար, սոխակ ծանրագին՝
'Ի լուին վերայ իմ գերեզմանին,
Տացես զմայլիլ և մարդկան յետին ։

---

ԴԵՂՁԱՆԻԿ ․

Գողտրիկ իմ անմեղ, քաղցրիկ դեղձանիկ,
Մի՛ դու աներկիւղ վեր 'ի վեր թռիր ․
Մի՛ այլ ես զքո բարձր դներ բունիկ,
Այլ հիւսեա՛ 'ի մէջ խոտոց ուռճալիր ։

Հայե՛աց , ե՛րբ քաղցեալ բազէ անդ բարձուստ
Ճա՛խր առնու , սլա՛նայ 'ի գլխոյդ վերայ ·
Տե՛ս , ե՛րբ ծարաւի՛ արեանդ 'ի հեռուստ ,
Սրբէ զիւր ճիրանս սրածայր զանգեղեայ ։

Բուսանի կնձնի 'ի կատար լերին ,
Բայց շնչէ խորշակ , այրի տօթահար ·
Գայ և փոթորիկ ժխոր մրրկածին ,
Բեկանին ստեղունք , խլին տերևք 'ի սպառ ։

Սակայն 'ի հովտի ուռի լռաւէտ
Անա՛հ 'ի մրրկաց կայ ամբո՛ղջ , կանգուն ·
Անդ 'ի պտոյտս հոսեն ջուրք յստակ յաւէտ ,
Տա՛ն 'ի ջերմ տապոյ ըմպել պատարուն ։

Այլ արդ զի՞ է ինձ թախծիլ տրտմագին ,
Զի ո՛չ ես ծընայ իշխան մեծանուն ·
Թո՛ղ մնացէ 'ի յոյզ 'ի տաժանս սորին ,
Որ փառացն ախտիւք մոլեալ է համբուն ։

Իսկ ես ընդ խոնարհ շաւիղ ստորին ,
Լոյս տաց յընդունայն հոգւոց նանրութեան ,
Աջակից երկոց իմայնոցս անգին
Գտայց բարեբաստ 'ի տընանկութեան ։

# ԱՐՏՈՒՏ ԲԱՆԴԱՐԳԵԼ։

Երկին յորդ շնորհօք բնութեան բարեբեր
Բաշխին ծաղկազուարճ կեանք և զարդ գարնան,
Նո՛յն ազատ 'ի կամս թռիչք թռչնոց յեթեր,
Իմ արտոյտ է եթ վրհատ, տրտմական։

Լո՛ւռ 'ի վանդակի, ո՛չ թռթռայ 'ի վեր,
Ո՛չ ևս յելևէջս առնու նա շրջան,
Ընդհարկանի, զայ թևակօք յերեր,
Բայց լուծել չմարթէ կապանս զարգելման։

Ո՛չ և որոնէ զսերմն ինքեան 'ի կեր,
Զըմպէ և զջուր 'ի զով իւր պապակման.
Ցամքեալ կոկորդն 'ի սպառ 'ի յաւեր,
Ո՛չ սուլէ, չ'երգէ զիւր երգ սիրական։

Բաբէ՛, զի՞ է քեզ, զի՞ տրտում եղեր,
Ո՛ քաղցրիկ արտոյտ, զի՞ աղէտդ այժմեան.
Նո՛ր յարգելանդ ես ձանձիր, վեհեր,
Իսկ ազատ յանտառս երգէիր գարնան։

Հա՛պա, ե՛կ այսր ե՛ւ դու անվեհեր.
'Ի յարգանս սերկեան տօնիս խնդութեան,
Նս կամայօժար զքեզ՝ իմ ընկեր՝
Արձակեմ 'ի քոյդ կապից արգելման:

Թռեա՛ց բարձր 'ի վեր 'ի յստակ յայեր,
Երգեա՛ Բարձրելոյն դու զերգս փառաբան.
Յիշեա՛ և յաղօթսդ զիս հեքս վշտամբեր,
Ո՛վ իմ անուշակ արտուտ սիրական:

---

## ՀԱՏԻԿ ԾԱՂԿԱՆ:

Յանձուկ մութ 'ի բոյն
Հանգի՛ր, հա՛տիկ մոյն.
Տո՛ւր, խղձո՛ւկ, արփւոյն
Հրաժեշտի զողջոյն:

Ծածկեցից խորին
Զքեզ հողով գիձին,
Ապահով ցրտին
Յօդոյ տօթագին

Թէ էր քեզ, հընար
Գալ 'ի յուշ, բարբառ,
Ըյո՛, վշտահար
Ըսէիր ինձ՝ «Ճար

«Չի՛ք ևս քեզ բնաւին,
«Տեսանել կրկին
«Լուսածիր զարփին
«Ըյդր 'ի քո շիրմին»․

Ո՛չ, ո՛չ սխալիս,
Հատի՛կ սիրելիս․
Դու ո՛չ փոխեցիս
'Ի Թաղման վայրիս։

Մի՛ ինչ վհատիր,
Չէ՛ կեանքդ անյարիր․
Յանդորր կա՛ց, հանգե՛ր
Յայս փափուկ երկիր։

Յարիցես աստի,
Յիւրում նուագի,
'Ի բուն, շիւղ բերրի
Նուցես կրկնակի։

Նո՛ր դու զթարմիկ
Բերցես գեղեցիկ
Զանուշիկ ծաղիկ,
Գուցէ երկպատիկ ։

Հատիկ, քեզ նման
Վաղ կամ անագան,
՚Ի կենացս փախչման,
Եւ զիս անկենդան

Դիցեն ՚ի շիրմին
Ցուրտ, խաւարչտին,
Եւ ՚ի քուն խորին
Մնացից ցօր վերջին ։

Բայց նմանապէս
՚Ի գերեզմանես
Յարեայց այլ և ես
Յայն ահեղ հանդէս ։

Յոր Տէրն աշխարհի,
Զայնիւ սքանչելի
Ասասցէ՝ արի
Եւ ե՛լ դու այտի ։

## ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ։

'Ի գալ հասանել զուարճ աւուրց գարնան,
Ելի 'ի ձեմել 'ի մարգս ծաղկազարդ ·
Ընդ 'ի հոյլս թռչունք, երէք բազմազան
Հրճուակից ընդ իս խնդային զուարթ ։

Ընդ ոչ ինչ կարի հեռի 'ի գետոյն,
Որ ընդ սէզ կանաչ հոսէր կարկաջուն՝
Տեսի առ ափամբ զայր ոմն ծերագոյն,
Էր գետնախշտի յանդորր խոր 'ի քուն ։

Կնճռեալ, ալեզարդ էր նա յոյժ տըկար,
Ծածկեալ քրձեղէն ձորձկաւ կոշտ և հին ·
Ոչինչ 'ի նմանէ անդամոր 'ի տար
Կայր անկեալ կարճիկ գաւազան նորին ։

Եւ մանր մի և եթ չոր հացի պատառ
Գըտանէր նորայն 'ի մաշկեայ պարկէն,
Զոր ոմն բարեգործ ծերոյն այն չուառ
Տուեալ էր արդեօք առ սիրոյ փրկչին ։

Շրջեալ յանկարծոյն նա 'ի մէջ քնոյն,
Ընկն յուշի և բաց զաչս իւր առ ժամայն.
Աղբիւր աղեխարշ արտասուաց իսկոյն
Հեղոյր դառնագին 'ի յաչաց նորայն:

Օ՛մէ՞, ծերունի՛, ասա՛ սիրելի,
Սերտ կարեկցութեամբ հարցի ցնա ես,
Զի՞մ քո առուաքար դառն արտօսր հոսի,
Մի՞թէ դու զաշխարհ ոչ սիրես առես:

'Ի բանիցս դարձուած՝ յայնժամ նա վրհա՛տ,
Առ իս զիւր դարձոյց զդէմն տրտմալի.
Այնքան հէք, ողորմ աչօք յուսահատ,
Մինչ ես 'ի խորոց 'ի յոգւոց ելի:

«Ո՛վ իմ ախտակից, սիրելի որդեա՛կ,
(Նա հազիւ ասէ ձայնիւ ոգեսպառ)
«Վարեմ արտասուօք զիմ կեանս դժնդակ,
«Ո՛չ լեցի և վերջ վիճակիս 'ի սպառ:

«Հիւծեալ եմ համբուն տրտմութեամբ դաժան,
«Կորացեալ ծանու ծերութեամբ խորին.
«Չ'ունիմ ինչ յապրուստ, ոչ ժամ հանգստեան,
«Տկար եմ անոյժ 'ի գործ բընաւին:

« Մեռաւ իմ որդի յաւուր հասակի ,
« Թողեալ յորբութեան ինձ զերիս որդիս՝
« Ես մնացի նոցա պաշտպան միակի ,
« Տհաս են քաղցեալ , 'ի յետին կարիս ։

« Ստացեալ արտասուօք զկէս մասն հացկան ,
« Զոր դուդ տեսանես յիմում մախաղի ,
« 'Ի մէջ զաւակացս՝ ամենից բաժան
« Պարտիմ ես առնել 'ի դառնալ աստի ։

« Այս իցէ թերեւս և յետին պարէն ,
« Զոր տացէ ձեռն իմ մանկանցս տնանկաց ։
« Գթա՛ 'ի վաղուն՝ ( Տէր իմ ապաւէն ) ,
« Գուցէ իմ հացէ վերջին ժամ կենաց » ։

Նա անդրէն լռեաց , այլ խիստ տանջանօք
Իւր նսեմացեալ նայեցուած հեքոյն ·
Ես յողորմ տեսոյն , դառն նորա վշտօք
Հարայ յարտասուս 'ի խիղճ սաստկագոյն ։

Այլ զի բախտացի 'ի նուազին յայնմիկ
Դրամոց քսակ էր յիմ գրպանի ,
Հանեալ սեղմեցի զայն 'ի ձեռն մեղմիկ
Տառապեալ ծերոյն թշուառականի ։

Ո՜հ քանի՜ ջերմին զգացմունք գոհութեան
Մեծ էին հէքոյն ՚ի սրտի ցրտին ·
Քանի՜ յարգանաց, գթոյ էր արժան
Ալեզարդ անզօր ծերն այն վշտագին ։

Քաղցր է ողորմել դժբախտ տնանկաց,
Զորոյ զառաջինն առի ես ճաշակ ·
Եւ զուարթուն, անչափ բերկրութեամբ մտաց
Զայն օր անցուցի ողջոյն յաջողակ ։

---

## ԽՆԴՈՒԹԻՒՆ ։

Ո՜հ, քանի՜ անգին ես ո՜վ խնդութիւն,
Քանի՜ տենչալի մեր ՚ի կեանս համայն,
Մինչև քև ցանկայ անդուլ մարդկութիւն
՚Ի ծնէ մինչ ցմահ կեալ, շնչել, միայն ։

Այո՛ դու ես մեր ըղձալի բարիք,
Թարց քոց վայելից կեանք թուի զերդ մահ ·
՚Ի քեզ ներհորդին մեր պէտք և կարիք,
Քև և տարբերի վիճակ գերագահ ։

Դու ձիր երկնային, շարժիչ զգացմանց,
Զարդ կենդանաբաշխ բնութեան բովանդակ։
Որ չես դու հոգոց, զբաղմանց, յուզմանց
Նախնական իսկ հիմն, միակ նպատակ։

Քո ներգործութիւնք քաղցր են և անձաւ,
Ի ածլին թափնթափ 'ի մեր սիրտ, հոգի։
Հրաշ առ հրաշ փայլեն մեր դեմք վառ 'ի վառ,
Մինչ քո սխրալի լոյս 'ի ներքս ծագի։

Բայց աւաղ, զի դու ժխտես մեզ փութով,
Բառնաս յաւ յաւուր զանոյշ զգացմունս,
Եւ գայ քո զկնի աղետ 'ի վրդով
Խոր 'ի սիրտ ածել զդառնին աղունս։

Դու շրջան առնուս, ծանուցնս մէտ 'ի մէտ
Հանես մեզ 'ի ցոյց զժամն անուշակ.
Կամ՝ մերթ գայթ 'ի գայթ, միշտ արագամէտ
Գաս 'ի թուիչս փախչիս, տաս ցաւոց գուշակ։

Մինչ ծագի քո լոյս 'ի սիրտ մեր ընդ թափ,
Թուի այն անշէջ, անանց միշտ առ միշտ.
Եւ մինչ յափշութեան հարկանեմք զծափ՝
Յանկարծ վերանայ... փոխարէն գայ վիշտ։

Այն ինչ ողեսպառ ցաւօք դժուարաւ
Իջեալ անկանիմք 'ի սուգ 'ի կործան,
Դու ծածկեալ 'ի մէնջ անլոյս խաւարաւ,
Նուագիս յանկարծոյն 'ի ծագաց անծան ։

Ահ, որչափ անոյշ քո բարի պտուղք
Թուին հաճելի հոգւոյ մեր սրտին,
Առաւել դժուար, կենամաշ են ուղք,
Որք քոյդ ներհակաւ յաճախ մեզ հորդին ։

Այլ զի դիւրափոխ ես շրջագայուն,
Դու թուիս գոլ ինչ համասեռ բախտին ․
Զի և սա քեզ պէս անդուլ այլայլուն,
Երևի, մեկնի, գայ և վերստին ։

Անյոյս լինին քո գալուստ և փախուստ,
Նոյն և ներհակիդ անձկութեան ել, մուտ ։
Անտրտունջ տանիմք որ ինչ 'ի վերուստ
Յղի մահացուացս 'ի կեանս դժուարուտ ։

Իսկ յիմ սիրտ չազդեն պահք քո վայելից,
Ինձ թուէին նոքին երազք անըրջոց,
Ոչ ես զիս դիւթեն խոկմունք բերկրալից,
Ուր վաղ թաղեցան ամաց խոր 'ի ծոց ։

Ո՛հ, թո՛ղ նախանձանք հիւրոյդ առօրեայ
Փոյթ կալցեն զքոյդ դիւրանց բերկրանաց.
Նա միայն յուզեմ զանանցն, մշտօրեայ
'Ի դրունս յաւերժին 'ի վախճան կենաց։

## ՄԱՆՈՒՇԱԿ։

Նորաբոյս, հեզիկ զքեզ մանուշակ.
Յղեմ առ քաղցրիկ իմ սէրն անուշակ.
Ե՛րթ առ այն փափկիկ հրաշագեղ հրեշտակ,
Ե՛րթ, մուտ, լուռ, յուշիկ 'ի նորայն սենեակ.
Տո՛ւր նմա մեղմիկ համբոյր բացարձակ,
Պատմեա՛ զիմ ողջիկ խղճալի վիճակ,

Այն չնաշխարհիկ
Սիրուհւոյս գողտրիկ,
Ա՜յ նորաբացիկ,
Թարմ, մանրիկ ծաղիկ։

Ե՛րթ՝ գարնան գուշակ, ողջամբ առ իմ սէր,
Յայտնէ՛ համարձակ պատմեա՛ անվեհեր

Նման զիմ՝ փափագ , լե՛ր յինէն հրաւէր
Թողուլ զքաղաք , զկեանս ձանձրաբեր ,
Գալ 'ի յայս նուագ առ իս իբր ընկեր ,
Վայելել արձակ քաղցրութեան յօրեր ,

Ճաշակել ընդ իս
'Ի զմայլիչ վայրիս ,
Դրախտանման յայգիս
Բնութեան զբարիս . . . .

Աստ՝ ասա՛ , գարնան 'ի չքնաղ նուագ ,
Յերեսս գեղազան դաշտաց կապուտակ
Խաղան և խայտան անա՛հ , համարձակ ,
'Ի հոյլս բազմազան կարապք , սագք , սարեակք ,
Երգեն և խնդան տատրակք , ծիտք , սոխակք ,
Ճչեն և թռթռան ծիծառունք , աղաւնեակք .

Այլ , ափսո՜ս , նոցուն
Քաղցրիկ տեսք սիրուն ,
Երգք , ձայնք գալարուն
Զիմ իղձ ոչ լնուն ։

Աստ գունակ գունակ՝ ասա՛ , են վայրէք ,
Աստ , անքանակ բնութեան ծիրք , բարիք ,

Անդորր եղանակ, հովիտք դալարիք,
Ծառք բազմատեսակ, վայելուչ այգիք,
Դաշտք, անդք ընդարձակ, զովաշունչ մայրիք.
Բայց սոքին համակ գերւոյս ողորմիկ

Տալ դեղոյ հընար
Դըտանին տկար,
Ուստի և անճար
Կամ հէք ցաւագար:

Ասա են վարդ, շուշան, ծաղկունք բիւրազան,
Որք բանին անջան գեղով զանազան,
Բուրեն զովական հոտ անմահութեան.
Բղխին ընթանան և անհատական
Աղբիւրք բազմակնեան, գետք յորդահոսան.
Այլ այս մօրս բնութեան չքնաղ տեսարան

Ո՛չ կարէ բնաւին
Դիւրել զիմ՝ խորին
Ցաւ հոգւոյս խստին,
Տալ հանգիստ անձին:

Ասա՛ պա՛րզ յայտնի, թէ ես յամ երկար,
Ի նմանէ հեռի յայս երկրի օտար,

Յաղեաից միջի տանջիմ չարաչար ,
Սիրտ իմ տրորի , մաշի անդադար ·
Զի ոչ գտանի աստ իմ մխիթար ,
Մինակ սիրուհի կենացս խնդարար ,

Որոյ եմ գերի
Սիրոյն նազելի ,
Գեղոյն գովանի ,
Տեսոյն փարելի ։

Նա՛ փշտահար 'ի տանջանս անհուն
Զունիմ ես ինչ ճար , և կեանք իմ համբուն
Նոյնանեն խաւար աստ անյայտ թաղուն ,
Միայն յաղթահար սիրով պատարուն ,
Հարեալ զքնար սրտի իմ աղդուն՝
Երգեմ մեղմաբար ես զսէր նորուն ,

Եւ այսու միայն
Տանջանք հոգեկան
Իմ թեթեւանան
Գէթ 'ի մի վայրկեան ։

Ո՜հ , աստի ունայն են վայելք 'ի սպառ
Կաան իմ , զի համայն սիրտ , միտք բռնաբար

Զգօ՛ն մի միայն առ սէրս գերեվար ։
Նա միանգամայն ցաւոյս բժշկարար ,
Նա իմ ամենայն յոյս , կեանք , մխիթար ,
Դուկ և ես նորայն անկեղծ սիրահար ,

Վարօտ , ծարաւի ,
Նուաւայ և գերի
Տեսոյն սխրալի ,
Գեղոյն պաշտելի ։

## ԹՈՒՂԹ ։

## Առ Ս… Ա…

Սրտամուխ նետիւ տխրալից լրոյ
Պաշտելի անձինդ վերահաս ցաւոյ
Հարայ ես յանկարծ 'ի խորոց հոգւոյ ,
Բարձան իմ նախկին բերկրանք գլխովին ։

Ո՛հ , ուստի՛ , ասա՛ , ծը՛նաւ այդ քո ցաւ ,
Յորմէ կարեվէր իմ սիրտ խոցեցաւ ։
Ասա՛ , թէ եղից ախտիդ զիս 'ի գրաւ՝
Հեռացի՛ 'ի քէն այդ հիւր ատելի ։

Փո՛յթ չէ քեզ գուցէ հանգչիլն 'ի մահճի,
Բայց չէ՛ք հնար վասն իմ դիւրել ցաւ սրտի,
Որ քեւ 'ի հեռուստ զուարթ, կենդանի,
Խնդայր մխիթար սիրովդ պատարուն ։

'Ի բնէ քեզ տուան ձիրք բժշկական,
Իմ սրտի վէրք քեւ յաճախ բուժեցան . . .
Ուստի իրաւամբք, քո բարեաց փոխան՝
Հարկ է տալ զիմ անձն ցաւոյդ 'ի բաժին ։

Բաւել դիւրենն, տո՛ւր զայն գլխովկն
Հին ցաւագարիս, զի և քո անձին
Տարայց տանջանաց ցաւոյդ դառնագին,
Միայն թէ իցես դու հանգիստ, առողջ ։

Սէր իմ յառաջուց է քեզ քա՛ջ յայտնի,
'Ի փորձոյ գիտես զգերիդ նախնի,
Գերիդ՝ որոյ սիրտ միշտ քեզ պատկանի,
Եւ որոյ դու միայն ես յոյս խնդութեան ։

Իւր փափագ հոգւոյս յանփործ կացութեան,
Նորագիւտ բաղդիւդ՝ 'ի նոր տեսութեան
Ընդգրկել զքեզ, 'ի ժամ համբուրման . . . .
Ընտրտունջ, ուրախ ճաշակել զմահ ։

Բախ հոգւով ասեմ, զի դու ես միակ
Իմ կենաց նեցուկ, անշուշտ նպատակ ։
Նրա́ երբ կամիս զիս քեզ պատարագ,
Քո եմ հպատակ մինչ ցկետ յետին ։

Իմովսանն նուէր բերի քեզ յընծայ,
Տուր քեզ զիմ սիրտ միշտ գերի կամայ,
Զի յուսով յապայն սիրովդ աներկբայ
Գտից ես ինքեան ցանկալի հանգիստ ։

Մէ՛ ապ՛ յապաղեր, ով սէր իմ անգին,
Բուժել խնդութեան լրով զիմ հոգին ։
Որով զգեցեալ զօրութիւն կրկին՝
Կարացից կեալ քեւ, կենօքդ իմ կենաց ։

## ԱՆԱԿՆԿԱԼ ԴԻՊՈՒԱԾ.

Սքողեալ զերեսդ լուսանկար,
Ի՞ր դու թագչիս վայրենաբար ։
Զմ՞ չ'թողուս գեղոյդ պայծառ
Ծագեսցի լոյս յիմ սիրտ խաւար ։

« Գիտե՞ս, սիրոյդ եմ գերեվար,
Ո՛վ սիրուհիս, մի՞թե ես քար ։ »

Ո՛ քեզ ուսոյց հի՛ն սովորոյթ
Ծածկել զերեսդ ’ի հեզ գերւոյդ .
Չէ՛ այդ վայել . զի՞ և քեզ փոյթ
Պահել անյայտ զգի՛ն գեղոյդ ։

« Ցոյց մի՛ խնայե՛ր ինձ գութ զքոյդ ,
Բա՛րձ յերեսացդ ’ի բաց ծածկոյթ » .
( Գիտեմ՞ սիրոյդ ն այն , Հերդեր )

Փայլուն դէմք քեզ տուան ’ի զարդ
Շնորհօք բնութեան , այլ դու զմարդ
Յապուշ կրթես իբրու կախարդ ,
Ձգես յաղդոյ սիրոյդ թակարդ ։

« Թո՛ղ զայդ բնութիւն անխե՛ղճ վիմարդ ,
Յո՛յց ինձ գերւոյդ զդէմսդ զուարթ ։
( Կերնուսի , « գիտեմ . . . » ) .

Իմ ծարաւոյ տեսոյդ փափագ
Լի՛ց աղաչեմ՝ թէ ո՛չ ցյագ ,
Այլ գէ՛թ ընդ ժամն , զի ես ճարակ
Չ՛եղէց ցաւոց ’ի կեանս համակ ։

« Յո՛ւշ լե՛ր անձին , սէ՛րս անուշակ ,
Թո՛ղ զմայլեցայց քև ես անյա՛գ ։
( Նո՛յն ընդ Վերնոյն ։ )

Նոյն յաջողակ ժամ հանդիպման
Ի ցոյց կարօտ զիմ բաղձանեան ։
Մի՛ զիս թողուր յոգւոյ խռովման ,
Գո՛րծ աստ առ իս անե՛րկեան ։

« Թո՛ղ տեսից քո դէմք գեղաղան,
՚Ի վարձ սիրոյս գէթ մի վայրկեան ։
( Նո՛յն ընդ վերոյն ։ )

## ՎԵՐՍՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ։

Տեսոյդ անդէն
Զգացմամբք նախկին
Նշէ կրկին
Նա արժան ,
Բայց աւա՜ղ զի վերստին

Նշետիւք լի
՚Ի սիրտ հոգի ,
Դառնամ աստի
Թարց արդեան՝
Հեգ յուսախաբ գլխովին ։

Չէ՛ այս ինչ նոր ,
Զի դու յորդոր

Եղեր բոլոր
Նուանդեան
Սիրոյս ցաւոց ահագին ։

Մ՛ինթէ միայն
Ու այս փախձան
'Ի բնէ տուած,
Սիրական՝
Ո՛վ աննման ձիրք քոյին,

Զի կայցէ յար
Հեզ վշտահար
Քո սիրահար
Ցփախձան
'Ի դառնութիւնս դժուարին ։

Ո՜վ յայս պահ,
Չիք ինձ այլ շահ
Եթէ ոչ մահ
Վերջնական,
Բաժին իմ խիստ օրհասին ։

Քեզ եմ երկար
Ժամ մխիթար
Ո՛հ, վայրաբար
Պաշտաման
Նստու 'ի զոհ կամովին ։

Միայն զի դու
Ժպտմամբ քաղցու ,
Սիրոյս ազդու
Նուանդեան
Տայիր զվարձ ցանկալին ։

Ոչ զո՛ւր կորեան
Իմ ջանք տաժան ․
Զե՛ղէ արժան
Կատարման
Ուխտի սրտիս վշտագին ։

Ուստի այսօր
Տխուր անզօր ,
Խոցեալ 'ի խոր՝
Ընկենդան
Դառնամ ես յետս տրտմագին ։

Թողում հոգւոյս
Վիճակ զանյոյս ,
Ո՛ սիրուն կոյս՝
Բուժական
Քո խընամոց գլխովին ։

## ԽՕՍՔ ԸՆԴ ՍԻՐՈՒՀԻՈՅ։

Հե՜ր դու՝ պղջի՛կ, այդպէս այսօր
Զքնաղ, թարմիկ ես գեղեցիկ.
Ըսա՛, զի՞արդ յերեսդ նո՛ր
Շողայ փայլուն լոյս անուշիկ...

Մա՛շ վա՛շ, գլխոյդ քո գեղաշուք
Վա՛ջ մարմարի արդեան պերճ զարդ,
Ու վառ ՚ի վառ այտք քո փափուկ
Թուշին զուարթ գեր քան զվարդ։

Ո՛հ, այդ պաճոյճ զդեստ հարուստ
Ինձ երևի խիստ աւելորդ.
Այն զի տուաւ քեզ ՚ի բնուստ,
Զի՞ է ա՛րդ ես զարդ նոր և խորթ։

Այժ՛ պիտակ քեզ չ՛է վայել,
Զի բուն չքնաղ դեղ քո կայտառ,
Յոր անյագուրդ կամ ՚ի հայել՝
Ու անզա՛րդ միշտ է լուսավառ։

Սխալէս, սխալէս աղջէկ սիրուն,
Չէք յարարածս այլ զարդ, գոյն, դեղ
Պարզ, վայելուչ, անոյշ, փաղփուն
Կան զպատկերդ շքեղագեղ։

Թող, աղաչեմ, զայդ զուր վաստակ,
Թող, զի առատ պարգեւք բնական
Որ պաշտելին քո գեղ յըստակ
Ցուցցեն ի տես, 'ի գով մարդկան։

'Ի քեզ բնաւին չ'էք ինչ արատ·
Տուաւ ամէն քեզ անթերի·
Միայն զի ես 'ի գութ ժըլատ,
Անմտադիւր առ քոյդ գերի։

Ես եմ գերիդ, ստրուկ սիրոյդ,
Իմ միտք, հոգի, սիրտ եռանդուն
Առ քեզ թռչին 'ի գիւտ գթոյդ,
Եթէ 'ի քուն, եթէ արթուն։

Գթա՛, հայցեմ, առ իս դարձիր,
Ա՛ռ զհամբոյր շրթանց ծարաւ,
Որ տալ այտից քոց վարդաձիր
Ցանկամ վաղուց սիրով ամբաւ։

Մի՛ եւս յամեր, տո՛ւր դեղ ցաւոց
Պանդխտելոյս յաշխարհ օտար,
Լե՛ր ունկնդիր իմ հայցուածոց,
Ցո՛յց քո զգութ ինձ 'ի սատար։

Յիմ 'ի կապել զգայութեան
'Ի հանգստեան յիմ միտս համայն,
Որ ինչ զքեն 'ի տունջեան՝
Նոյն երեւոյթք զան գիշերայն։

Եթէ լինեն դու անջատիս,
Հեռի կալով մահ ինձ բերես.
Իսկ թէ կարի մերձաւորիս,
Մահ ինձ բերէ մերկ քո երես։

Այսպէս ես միշտ, բաժին սրտիս,
Կամ 'ի յաղէտս խիստ անըմբեր,
Հեռի և մերձ յամէն տեղիս,
Կարօտ, ծարաւ քեզ անհամբեր։

## ԲԱՌԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ։

Ունիս գեթ ժամ մի պարապոյ,
Ո՛վ ընթերցող իմ դու արգոյ.
Լուր անտրտունջ բանիցս կարճոյ,
Որք չ'են բնաւ անհաւատոյ։
Հարցցե՞մ յինէն, զինչ ինչ պիտոյ
Խօսիլ ընդ քեզ զիրաց հաճոյ։
Զայս քո խնդիր գտցես յետոյ
'Ի բանս իմ աստ աջոյ ձախոյ։

Ընդ 'ի սկզբան մինչ ազգ մարդկան
Երկ զիւր լեզու 'ի գործ 'ի բան՝
Էկի փութով ես յերեւան
'Ի զրոյցս 'ի ճառս ճոխ պերճաբան։
Չէ՛ յայտ, ո՞վ, երբ՞ զիս պատուական
Երար արժան ընտիր անուան.
Բայց երեւի՝ քաջ խոհական
Նախ զիս ստեղծ 'ի պերճ յիւր բան։

Թուեի՛ն անյայտ քեզ բանքս դժուար,
Ո՛չ գտին քո միտք զդադար
Զաւ 'իմ գիտել զանուն տիպար։
Էթէ այդպէս և դու յերկար

Ջ՚կամիս խորհել ՚ի գլուտ ՚ի հնար
Յատուկ անուամն իմոյ զարդար ·
Ասեմ քեզ պա՛րզ՝ ՚ի վերջ կատար ,
Թէ զիս ծնաւ միայն հանճար ։

Իսկ թէ թուի մութ և այս բան ,
Զի սա ունի զայլ նիշ , շրջան ·
Ապա՝ լո՛ւր ինձ , զմիտս փական
Բացից քեզ աստ ես խօսական ։
Որ քա՛ջ գիտէ զարհեստ գրական ,
Նման յայտնի եմ նախածան ,
Զի ըստ բառից ես բաժանման
Կոչիմ ամբողջ պարզ գոյական ։

Սակայն եմ ես և ածական ,
Այլ և մակբայ որակական ·
Ուստի կոչի կիրթ խոհական ,
Որ զիւր ինև նիւթէ զբան ։
Իսկ թէ վանկիցս դիցես բաժան ,
Լինիմ նա և ես զանազան , —
Կէսս գոյական , միւսն ածական ,
Վերջինն և բայ հրամայական ։

Գիտեմ և այս չ՛եղև յարմար ,
Ստաց քոց ճիշդ տալ զվճար ·

Նապ ե՛կ, լո՛ւր իմ բանիցս արդար,
Գնի՛տ քո յուղմանց դու ըղձադար:
Սա՛նկ աւաջին է հնար կամ ճար,
Դակ յետինն հեւլի, օտար·
Բա՛րձ միայն զ ծո, Թո՛ղ մնացէ տար·
Նայդ իմ ամբողջ է իսկ գումար:

Թէ աւիցես, ես եմ ճարտար,
Պահե՛մ 'ի միտդ զայդ իմ տիպար·
Յիս գոյ և դեղ, աւ զայն ճար տա՛ր
Ցաւոց որոց յուզեն զհնար:
Ջէ՛ իմ այսու բանից կատար, —
Հա՛ն զվա՛նկն տար` չ'եղէց տկար,
Տա՛ր կցեա՛ զ նոյն ընդ բաւի՛ն ձար,
Ուստի ելցէ 'ի տես նոյնճար:

Հուսկ` բա՛րձ ըղ ը էն 'ի բայէն տար,
Որ կից յօդեալ ընդ բաւի՛ն ճար
Համդէպ ցուցցէ քեզ յարկ տաճար:
Նապա փոխան տէ-ն ի՛ն դէն տա՛ր
Կցեա՛` տեսցես թէ՛ որք 'ի տար,
Զուրկ 'ի նմանէ են յայժմեան դար`
Թէ՛ ձոխ, աղքատ թէ՛ բարի, չար,
Թ'և են մարդիկ, այլ զուտ դաճար:

## ՋՈՒԱՐՃԱԼԻ ԲԱՆՔ։

### Ա.

Այր ումըն անփորձ կամի գնել ձի ,
Կոչէ 'ի խորհուրդ զիւր մօտ դրացի ·
Հարցանէ թէ՝ ե՛ւ իմացեալ լինի
Թիւ ամաց ձիոյ ։ 'Ի դարձուածս բանի՝
Յատամանց , ասէ , միայն ճանաչի ։
Ապա հանդիպեալ ձիավաճառի ,
Բանայ զիւր խորհուրդ , 'ի մէջ փողոցի
Պահանջէ հանել 'ի տես զմի ձի ։
Իսկ երբ ցուցանի մտրուկ գովանի ,
Բացեալ զբերանն հաշուէ ըստ կարգի
Զամէն ատամունս · դառնայ, ուժգոհի՝
Թէ' է այն հինաւուրց , չ՛է և պիտանի ,
Ահա յապացոյց ամաց վաղեմի ,
Զերեսուն երկու ատամունս ունի ։

### Բ.

Արքայ ումն երբեմն յաւուր որսօնի ,
Որսացեալ զէրէս , զԹուչունս՝ կամի
Ուտել զճաշ անդ 'ի յանապատի ·
Ուստի առ 'ի չգոյէ աղի , աւաքի

Մի՛ն 'ի ծառայից 'ի գիւղ ո՛չ հեռի ,
Հրամանաւ սաստիկ չառնուլ զայն ձրի ։
Կալեալ զայսմանէ տրտունջ ծառայի ,
Ասէ՝ զի՞նչ վայել գը՛նել Արքայի
Յիւրոց ստրկաց բուռն մի աղի ,
Եւ զի՞նչ վնաս թէ՝ գի՛ն ո՛չ հատուցի ։
Առ այս բա՛ն արքայ տայ պատասխանի
Թէ՝ այսօր , ասէ , յայգւոջ ստրկի
Թոյլ արարից ե՛նձ քաղել խ՛նձոր մի ,
'Ի վաղիւն իշխանք , թարց տարակուսի ,
Խլեսցեն յարմատոյ զամէն ծառ բունի ,
Արասցեն աւեր գլխովին զայգի ։

Դ .

Մեծն Աղեքսանդր յաղթող աշխարհի
Ունէր , ասեն՝ միշտ սովորոյթ յայտնի ,
Երբ ոք յատենի կամ՝ առանձնակի
Խօսէր ընդ նմա բանս զամբաստանի՝
Զմին յականջաց նա փութանակի
Խցանէր ձեռամբ 'ի տարակուսի ·
Իսկ յորժամ հարցաւ վասն է՞ր խորհրդի ,
Ասէ՝ միւս թողեալ փակ ականջ պահի
Այնմիկ 'ի բաժին , որ ամբաստանի ,
Եւ որ զնոյն առնել ունի ըստ կարգի ։

## Դ.

Ծեր ոմն գիւղական վասն իւրոց կարեաց
Երթայր գլխիկոր յայլ գիւղ մերձակաց․
Դէպ եղեն նմա զճանապարհայն
Երեք պատանիք, որք միահաւան
Աղտեղի ծաղու բանիւք խեղկատակ
Անարգեն զնա, առնեն նշաւակ ։
Եւ մինչ ծերունին անտրտունջ, լռին
Տարեալ այպանաց գնայր զիւր ուղին,
Յառաջեալ զնա մին 'ի յայն լկտեաց,
Լպրծեալ դիմօք անխեղճ անկասկած
Երկրպագանէ նմա մի անգամ,
Ողջո՛յն քեզ՝ ասէ, ‘Նահապետ Աբրահամ ։
Բայց ծերն անխտիր առ բանս արհամարհ,
Շարունակ գնայ զիւրեան ճանապարհ ։
Տեսեալ զայս՝ մատչի երկրորդն ստահակ,
Ո՛ղջ լեր ‘Նահապետ՝ ասէ, Իսահակ ։
Տանի այլ և այս ծաղու ծերունին,
Անխռով երթայ, ո՛չ թողու զուղին ։
Իսկ երբ գայ յառաջ միւս լկտին տգետ,
Ողջո՛յն քեզ՝ ասէ, Յակո՛բ նահապետ ։
Օտեղի եառ ծերունին վայր մի,
Յանխռով հանդարտեան ետ պատասխանի,

Սխալէք պարո՛նայք, զո՛ւր են ձեր դատակ,
Ես չեմ Աբրահամ, Յակոբ, Իսահակ.
Անունս է Սաւուղ ես Կիսեայ որդի,
Կորուսեալ զհօրս զէշս որոնել եկի.
Գո՛հ եմ զԱստուծոյ՝ զի յաջողակի
Այսօր 'ի նոցունց ես զերիս գտի.

Ե.

Տղայ դեռահաս զառաջին նուագ
Տեսեալ հօր իւրոյ 'ի տան զթութակ,
Որ խօսէր զբանս յայլ և այլ գունակ՝
Մերձենայ նորին յերկաթեայ վանդակ,
Կարծելով, թէ է ընդել աքաղաղ,
Աներկիւղ ընդ նա մտանէ 'ի խաղ.
Մի՛ բնաւ որդեակ հպիր, հայրն ասէ,
Զի մի՛ կտցէ զքեզ, զոր ո՛չ ճանաչէ.
Ի՞հ, յայտնեաց սմա՝ ասէ այն տղայն,
Թէ քո՛ եմ որդի, անունս իմ Յովհան.

# Զ.

'Ի յանշէն վայրի խոժոռ, տաղակոյս
Շրջէր ոմն երբեմն յայսկոյս և յայնկոյս :
Իր զի՝ նա կալեալ 'ի ձեռին տետրակ,
Ընթեռնոյր, սրտնէր և էր զի՝ ներհակ,
Զծիծաղական առեալ զդիմակ,
Շշնջէր ինքնին առնէր և կատակ :
Աստ յանկարծ յառաջ գայ դէմ յանդիման
Այր ոմն ալեզարդ դիմօք պատուական :
Սա կարեկցաբար առնէ զառարկայ
Հարցմամբ թէ՝ է՞ր նա 'ի վայր հեռակայ
Մեկուսի շրջի դիմօք տխրագին :
Եւ զի՞նչ է գրքոյկ կալեալն 'ի ձեռին,
Զոր կարդայ, սրտնի, և է զի՝ ժպտի,
Հայցելով բանալ զխորհուրդ սրտի : —
Ո՜չ բազմօք յառաջ ետու ես 'ի տիպ
Զեղերերգական զիմ քերթուած փոքրիկ,
Եւ այն ո՛չ սակաւ՝ 'ի մէջ թատերաց
Եղև առարկայ հանդիսից մեծաց :
Սակայն անխրատ գրիչ յանդգնաց՝
Մոռացեալ 'ի սպառ զպարտիս յարգանաց,
Զօգտաւէտ պտուղս իմ աշխատանաց,
Գրէ իմ ընդդէմ յայս շարագրած
Լպիրշ զանձոռնի բանս անարգանաց :

Արդ՝ կարե՞մ տանիլ՝ ասա՛, այս վշտաց։
Մի՛ այդչափ սրտնիր՝ ասէ ծերունին,
Այդչափ է յոգունց քերթողաց բաժին,
Որք յաճախ յանմեղս խոտին, զրպարտին։
Զո՞ւր էր ապ՛ յայտնել զաշխոյժ քո ոգին,
Առնել քերթութիւն բազմաց հաճելին,
Շարժել սիրտ, զոգի նախանձոտ գրչին։
Թո՛ղ զքրտամաշ խոկմունսդ գլխովին,
Օ՛ն ե՛կ ցուցից քեզ զեւս հիանալին։
'Ի գալ հասանել 'ի տուն՝ ծերունին
Անյապաղ հրաման տայ իւր ծառային,
Բերել բանալի մեծադիր սնդկին,
Որ ծածկէր գոգցես զկէս սենեկին։
'Ի բանալ սնդկին նորին այն հեղինակ
Տեսանէ գրեանց յոյժ բազմատեսակ
Լի մինչեւ ցերես զանթերի կուտակ։
Արդ՝ տե՛ս զայս ամէն, կա՛լ քեզ յօրինակ,
Ասէ ծերունին յաւելեալ ընդ այն,
Թէ կէս են գրոց, որք 'ի լոյս ածան
Ընդդէմ գրուածոյս յանձանց բազմազան.
Եւ որ աւելի զարմանաց արժան,
Չէ՛ իմ ընթերցեալ այլ եւ ո՛չ զմի։
Իսկ պատճառ սորին ա՛յն է՝ սիրելի,
Զի յամաց անտի պատանեկութեան
Ասէի յաւէտ ինքըն ես ինքեան,
Թէ նոցին գրուածք դատաքննութեան
Են կամ հաւաստի կամ զրպարտական։

Եթէ հաւաստի, 'ի խրատ յապագայն
Անշուշտ բարեկամքս յայտնեսցեն ինձ զայն,
Իսկ թէ զլրպարտանք՝ ընդէ՞ր վայրապար
Ընթեռնուլ, սրտնիլ, նեղիլ վշտահար։
Արդ և դու որդեակ՝ իմ բանից խրատու
Հետևեա՛ց, կեցցես անխռով յանդորրու։

---

Ե.

Կա՛մ եղև երբեմն ուրումն արքայի
Հարցանել զուշիմ իշխան մի մտացի,
«Օ՜ ինչ խտիր ընդ մէջ բարբարոս մարդոյ
Եւ բիրտ տմարդի անկիրթ վայրենւոյ»։
Առ այս նա անդէն տայ պատասխանի,
Թէ մին 'ի միւսոյն, այն տարբերի
Այնու, զի յանտառս վայրենին բնակի,
Անծանօթ կենաց քաղաքավարի.
Իսկ կեայ բարբարոսն 'ի վայրս մարդաշէն,
Դժնեայ, կատաղի բարուք համօրէն։
Երկոքեան վարեն կեանս զանազգորոյն,
Գործեն յանխնայս զանգութ խստութիւն.
Մին յանդէտս 'ի բնէ և սովորաբար,
Միւսն ախորժելով մտօք կամակար։
Պատճառ առաջնոյն է տգիտութիւն,
Իսկ վերջնոյն՝ կրից դաժան մոլութիւն.

Առաւել դիւրեաւ ճշմարտիլ կարէ
Վայրենին, որ միս զմարդոյն ուտէ,
Քան զայն բարբարոսն վայրենաբարոյ,
Որ զեղբօր զանուն նմանւոյն իւրոյ
Ծամէ, տրորէ, պատճառէ նորուն
Զեղեւն, մեծ զրկանս մարմնոյ և հոգւոյն ։

## Բ.

Այր մի հռչակեալ անուամբ ստաբան
Գնայ խօսակցիլ առ ընկերս իւրեան ․
Այլ չև էր 'ի բան բացեալ զիւր բերան՝
Մին 'ի ծանօթից անդէն մեծաձայն,
«Սուտ է բնաւին» գոչէ, դորա բան ։
Այրն ամօթապարտ ասէ, զինչ արժան
Բանքդ անարգանաց, երբ ես տակաւին
Չեմ բացեալ բերանս՝ գոչես ահագին ։
Առ այս նա կրկնէ, թէ չէին սուտ իմ բանք,
Նոյն արհամարհանք, արդար անարգանք,
Զի ստող ես միշտ, սուտ են խօսքդ համակ,
Զոր ուսար, առնես յամենայն նուագ,

## Թ.

Ըստ ծերունի յայտնի Ճոխաբան
Գայ առ Հենրիկոս (*) Գաղղիոյ արքայն,
Խնդրել 'ի դիմաց իւր քաղաքակցաց.
Բայց երբ սկսեալ զբանս մաղթանաց,
Հնախօսութեամբ զանցեց ընդունայն,
Երկարեաց յոյժ զայն, չէր յոյս աւարտման.
Զնորուն կալնու ձեռանէ արքայն,
Եւ ցուցանելով նոր պալատ զիւրեան՝
Զիարդ թուի քեզ, ասէ, այս շինուած
Ե՞րբ հասցէ լրիւ յիւրն կատարած,
Զիցէ՞ վայելուչ գործ մեծ գովանի ։ —
Յերկբայս զիմաստից բանից Արքային,
Զի՞նչ խորհուրդ դորէն, հարց այն Ճարտասան ։
Նա այս տայ ընդ փոյթ Արքայ պատասխան,
«Թէ այսպէս իմն ինձ խօսիցդ զերկար,
Զոր արկեր արդէն 'ի Ճառ վայրաբար.
Բայց իմն զի քո զլուցաց համայն
Եղէ ես հասու, և զոր ինչ պատկան՝
Փոյթ կալայց յանձին, թարց ինչ մաղթանաց,
Կատարել յօգուտ իմ հպատակաց ։»

---

(*) Դ.

## Ժ.

Վաճառական ոմն գընեալ մեծագնի
Զմի մարգարիտ կարի անուանի,
Տանի 'ի վաճառ արժանւոյն գնոյ
Առ փիլիպպոս չորրորդ՝ Արքայն Սպանիոյ։
Տեսեալ սորա զայն հաղուագիւտ գոհար,
Զննէ մտադիւր հիանայ յերկար.
Ապա ասէ նմա, «Հի՞մ դու ո՛չ ծանեար
Զչափ քո անձին, ետուր մեծ գումար
'Ի գիւտ իրի միոյ զերթ ոք խելագար.
Նա՝ զի չէ ումեք գընել զայն հնար»։
Առ այս վաճառողն տայ պատասխանի,
«Ողջ լեր Տէր Արքայ, այո՛ կորուսի
Ստա՛հ զիմ բոլոր կենաց զբարին,
Բայց քննեալ ճշդիւ զվախճան իրին,
Աներկբայ յուսով, պանծանօք յանձին
Գիտէի անշուշտ թէ յաջող ելին
Այդ գոհար դրամոց ծնօղ է ինքնին.
Զի գոյ մեծափառ, հզօր յաշխարհին
Արքայ Սպանիոյ, որ կարէ դիւրին
Տացէ ինձ զգին արժանիս նմին»։
Գովասան բանիցս չհանդուրժեալ Արքայ՝
Հրամայէ ընդ փոյթ վճարել նմա

Զգին մարգարտին աւել քան զարժան.
Ապա՝ «Երթ, ասէ, ո՛ վաճառական,
Մի՛ ես համարձակ առեալ քեզ 'ի փորձ
Արկնեցես ընաւ զանխոհ դու զայդ գործ»:

---

### ԺԱ.

Բանի մի տղայք նորամարզ, անփորձ,
Շրջելով յաւուր պարապոյ, անգործ,
Յանկարծ պատահմամբ ընդ առաջ ելին
Պառաւոյ միում, որ հանդարտ, լալին
Վարէր 'ի յանդոյ զէշս իւրեան 'ի տուն:
Մին յայնց տղայոց աւագն, բանիբուն,
Որ միշտ հրճուասէր էր յոյժ ծիծաղկոտ,
Յառաջեալ փոքր ինչ դիմօք ցասմնոտ՝
Խրոխտ ձայնիւ գոչեաց «ո՜ղջ կեաս իշոց մայր»:
Փառք Տեառն՝ ասէ կինն, որդիք իմ իշեար,
Գո՛հ եմ յոյժ զձէնջ վասն այդր ողջունի,
Զոր հայցեմ լինել նոյն և յարգելի
Բարեսուն իմ քերց, ձեր մարց, որք այդպէս
Սնուցեալ զձեզ, համին ինձ 'ի տես»:

---

## ՃԲ.

Այր ոմն կողոպտեալ բազմիցս 'ի գողոց ,
Յահէ գիշերային այն անկոչ հիւրոց
Ոչ ևս ելանել կարէր 'ի փողոց ·
Ուստի մին 'ի փոքր բարեմիտ ծերոց ,
Տայր խրատ նմա բանիւք յորդորակ ,
Պահել միշտ առ ինքն մի զատրճանակ :
Այլ նա նոյն ընդ նոյն առնէ պատասխան
Թէ՝ այդ հնար բնաւ լինիլ ինձ պաշտպան
Ո՛չ կարէ , զի գողք մոռացեալ զԱստուած ,
Խլեսցեն այլ և զայն յանխնայ յիմ՝ ձեռաց :

## ՃԳ.

Երիտասարդ ոմն իշխան
Մարմնով տձև , այլ խոհական ,
Շրջէր երբեմն անխօս , միայն :
Յանկարծ որդիք ճոխ մեծատան
'Ի փողոցի մերձ առ նա գան ,
Ասեն ցմիմեանս 'ի յանդիման ,
«Նայեա՛ց նայեա՛ց , այս խենթ մորոս
Է մեր երկրորդ իսկ Եզովբոս » :

Անմեղաբար առ այս իշխանն
Դարձեալ նոցա տայ պատասխան
Թէ՝ ո՛չ սոքք պարոնայք իմ ,
Զի անասնոց 'ի դէմն խօսիմ :

## ՃԴ.

'Ի մէջ Սպանիացւոց է պատուոյ նշան ,
Ունել շարայար զանուանս բազմազան :
Ոմն 'ի նոցանէ երբեմն գիշերայն
Գայ 'ի Գաղղիա 'ի մի իջեւան ,
Զդուռն ընդ երկար բախէ բանալ զայն .
Զարթնու 'ի վերջոյ նորայն պահապան ,
Ելեալ 'ի պատշգամ հարցանէ ցնա՝
Ո՞վ է , զի՞նչ անուն , զի՞նչ և կամք նորա :
Առ այն մեր օտար տայ պատասխանի՝
Գիշերել կամի , է Սպանիացի ,
Գնայ 'ի Փարիզ , իսկ անուն նորա
Տօն Խուան Փետրոյ Հերնանտիզ Նովա
Գոտրիչեվ Աիլլայ կոմս Մալափըրա
Ասպետ Սանթիակոյի և Ալքանթարայ :
Զարմացեալ ընդ այս՝ ասէ պահապանն ,
Ներեա ինձ պարո՛ն վասն այդքան մարդկան
Յիմ իջեւանի չէ՛ք բնաւ օթարան .
Ե՛րթ և որոնեա զայլ տեղի ինքեան :

## ԺԵ.

ԶԱրիստիպպոս փիլիսոփայ
Աղաչէր ոմն, որ զանոպայ
Ունէր զորդի անուս անսանձ՝
Արգել զսա 'ի վարժս ուսմանց ։
Յօժարակամ առ այս հայցուած,
Փիլիսոփայն 'ի վարձ խնդրեաց
Հասուցանել ոսկիս քսան,
Իսկ յասել առն 'ի հիացման,
Թէ « այդ գնով հե՛շտ է կարի
Գնել ինքեան յաւանակ մի »,
Անդէն ընդ այս բանից դարձուած,
Իմաստասէրն յուշիկ կրկնեաց
Թէ՝ երթ, գնեա՛, զի 'ի քո տան,
Որպէս պէտք են, միոյ փոխան,
Բնակեսցեն անդօրր, արձակ
Ընդ քեզ երկու քո յաւանակք ։

## ԺԶ.

Եղբարք երկու, տարբերք ծննդեամբ,
Այնքան դիմօք, բարուք, սննդեամբ
Էին միմեանց համանըման,
Մինչ զի ծանօթք 'ի ժամ դիպման

Զոկել զնոսին ո՛չ մարթէին,
Ոչ և զամուսնս սուգին նոցին ։
Յետ աւուրց ինչ զմին յեղբարց
Երբ մահն յանկարծ յաստեացս եբարձ,
Ընդ միւս եղբօրն, որ մնայր կենդան՝
’Ի ծանօթից ոմն ըստ բերման
’Ի հանդիպելն եհարց ցնա
Յանկարծակս թէ՝ «հայցեմ ասա,
Ո՞վ ոք ’ի ձէնջ մեռաւ և ո՞
Մնայ ողջ, դո՞ւ թէ եղբայր քո»։

## ԺԸ.

Ընչաշատ բնութեամբ կուտաէր կին,
Տեսեալ իւրոյ առն ’ի ձեռին
Զնոր գնեալ կոտոր կտաւոյ՝
Որոյ գոյն չէր նման հաճոյ,
Ցոյց նմա դէմս զզայրագին,
Նշտամբանօք թէ «գլխովին
Ընտրես դու միշտ զվատ յուլին»։
Պատասխանեաց այրն մեղմագին
Թէ՝ «չէ՞ն սուտ բանքդ, այլ ճշմարիտ,
Զի եղէ ես այր յիմարիդ»։

## ՃԸ.

Այր մի դժբաղդ յոյժ աղքատիկ,
Փորձեալ յաճախ յաղէտս սաստիկ,
Տրտունջ լինէր միշտ զիւր բաղդէն,
Իսկ երբ հատաւ յոյսըն ամէն,
Երբ նոր չարիք եկին յառաջ,
Ապա եհան տխուր թառաչ,
Գոչեաց անդէն կատաղաբար,
«Թէ լինէի գդակակար,
Անշուշտ Աստուած ստեղծէր բնաւին
Առանց գլխոյ զազգ մարդկային:»

---

## ՃԹ.

Հիւանդ գոլով աղքատ Ապայ,
Կոչեաց առ ինքն զիւր զծառայ,
Որում տալով զերկու լումայ,
Հրամայեաց ճշդիւ նմա
Թէ «ա՛ռ զայս մին քեզ վարձ, վաստակ,
Իսկ զմիւսն ա՛րկ 'ի գանձանակ»:
Առեալ զնոսին գնաց ծառայն,
Բայց առ ժամայն դարձ առ աղայն,

Եւ երբ հարցաւ, «զի՞նչ արարեր»․
«Մեղաւոր եմ՝ ասաց, իմ Տէր,
Զի զլումայն արկի 'ի քսակ,
Այլ ո՛չ գիտեմ՝ ո՞րն 'ի վաստակ
Տուաւ, և ո՞րն 'ի գանձանակ․
Ուսո՛ խնդրեմ զմի ես նուազ։

## Ի․

Արբեալ իշխան 'ի փողոցի
'Ի հանդիպելն յանկարծակի,
Ընդ արահետ անյայտ բժշկի,
Հարց 'ի կատակս «ասա՛ ուստի՞
Գտաս ո՛ պայտար ձիադարման»։
Առ այս բժիշկն նոյն իսկ հետայն
Ասաց թէ՝ հաս ինձ քո հրաման,
Եկի բուժել զքեզ, իշխան։

## ԻԱ․

Անձնահաճոյ այր մի յիմար
Ասէր երբեմն խնդամտաբար
Իւր ընկերաց թէ՝ «երբ ասեմ
Զանիմաստ ինչ և կամ գործեմ,

Միշտ ծիծաղիմ ես առաջին
Յինքեան վերայ »։ Յունկնդրաց մին
Պատասխանեաց այն տխմարին
Թէ՝ « բարեբաղդ ես բնաւին ,
Ո՛չ այդպէս դու զկեանսդ անխափան
Վարել կարես յուրախութեան »։

ԻԲ.

Փրիտրիկոս արքայն Պրուսաց
Երբեմն յաւուր խրախճանաց
Եհարց ցմին յիւր բժշկաց
Թ՛ ասա խնդրեմ «յընթացս կենաց
Քանի՞ զանձինս առաքեցեր
Յաշխարհ գալոց · զի՞նչ և գրտեր »։
Պատասխանեաց բժիշկն առ այն
Թէ՝ « յոյժ սակաւ քան զոր Արքայն
'Ի մարտս 'ի կռիւս մատնեաց 'ի մահ ,
Յորոց սակաւ յոյժ ստացաւ շահ »։

## ԻԳ.

Մի ոմն շուայլ մնացեալ կարօտ
Դրամոց, եգիտ զայր անծանօթ,
Զոր և խնդրեաց թախանձանօք
Տալ փոխ դրամ մեծ տոկոսեօք.
Իսկ յասել առն թէ՝ «յարգելի,
Անճանաչ ես ինձ անյայտնի,
Ուստի տալ քեզ չէ՛ ինչ հնար»:
Արկնեաց շուայլն թ'«այդ իսկ պատճառ
Եղև խնդրոյս առ քեզ յորդոր,
Զի բարեկամք, ծանօթք բոլոր
'Ի վաղուց ինձ ո՛չ հաւատան,
Ոչինչ բնաւ և ո՛չ փոխ տան»:

## ԻԴ.

'Ի հարցափորձս դաստիարակ
Ցիւրն աշակերտ եհարց աւագ,
«Թէ զգայարանք քանի՞ են քո»:
Խորհեալ յերկար, իսկ հուսկ յետոյ
Ետ աշակերտն պատասխանի,
«Չորք են՝ որպէս ունիմ 'ի մտի,
Որք և հաշուին՝ նախ լսելիք,
Երկրորդն են ճաշակելիք,

Երրորդն ասի տեսողութիւն ,
Իսկ չորրորդն է զգայութիւն ։
Ապա դոյզն ինչ առեալ զշունչ ,
Հարց ուսուցիչն թէ՝ զի՞նչ քո ունչ
Զգայ, և կամ զի՞նչ գործ նորին ։
Ասէ համբակն « ո՛չ ինչ բնաւին » ։
Իսկ երբ եղև հարց ուսուցչին
Թէ՝ լաւապէս խորհեա՛ց կրկին ,
Միթէ չունի՞ս հոտոտելիս ։
« Ներեա՛, ասէ՝ չի՛ք բնաւ այն յիս ,
Զի ցրտահար յախտէ սաստիկ
Ունիմ հարբուղխ ես իսկ այժմիկ ։

## ԻՆ.

Բժիշկ ոմն երբեմն հարց ցիւր օգնական
Թէ՝ քանի՞ այսօր հիւանդըք մեռան ։
Ետ պատասխանի նա թէ՝ տասն և ինն .
Զարմացեալ ընդ այս բժիշկն վերստին ,
Եհարց է՞ր այդքան , զի դեղ բուժական
Գրեցի 'ի տոմսակս ես թուով քսան ։
'Ի դարձուած բանիցս ասէ օգնական
Թէ՝ « արդա՛րև այդ . այլ մին անսա՛սան
Ըմպել զքո դեղ ո՛չ եղև հաւան ,
Ուստի և նա կայ կենդանի միայն » ։

## ԻԶ.

Մի ոմն արբեցող յաւուր հրճուանաց,
Զարմացմամբ ասէր իւրոց ընկերաց
Թէ՝ «դիտմամբ յընթացս ես ամաց երկար
Ըմպեմ զսպիտակ գինի անդադար,
Նոյն քիթս օր քան զօր փոխէ զիւր զգոյն,
փոխան սպիտակի լինի կարմրագոյն»:

## ԻԷ.

Երկու շինականք 'ի խօսակցութեան
Գովէին հասեալ զեղանակ գարնան:
Մին ասէր թէ՝ «այս մանրահոս անձրև
Տևեսցէ այլ ևս, և ապա արև
Ծագեսցի, անշուշտ վաղ յայնմհետէ
Յօգուտ մեր ամէն 'ի հողոյ ելցէ».
Միւսն ընդ այն յօդեաց «մի՛ տացէ Աստուած
Զայդ դժբաղդութիւն, զաղէտ փորձանաց,
Զի զերկու կամայս ունիմ 'ի հող թաղած»:

## ԻԸ.

Հիւանդ տառապեալ ցաւօք դժուարին,
Բողոքէր զանձնէն յոյժ ողորմագին
Բերա յանդգնախօս իւրում բժշկին,
Թէ նա ընկողմնիլ ոչ զօրէ բնաւին,
Ոչ ժամ մի նստիլ, ոչ և կալ յոտին.
Ուստի զօգնութիւն խնդրէր տալ նմին։
«Ո՞հ, ասէ բժիշկն՝ քեզ դեղ հնարին,
Կախիլ կամ խեղդիլն միայ գլխովին»։

## ԻԹ.

Յաւուր միում ասաց Լուտեր
Կնոջն իւրում, որ կղացեալ էր,
Նա որ յայնմ իսկ ժամանակին
Գամբէր զայլ մի մանուկ ինքնին՝
Թէ «արդարև չէ հնար արձակ
Տալ կերակուր հիւրոց երկեակ,
Երբ յայնցանէ մի է 'ի տան,
Իսկ միւսն կայ հանդէպ դըրան»։

## Լ.

Մի ոմն քարոզիչ, 'ի ձայն ահագին՝
Հո՛ւր հո՛ւր բարբառեաց 'ի մէջ քարոզին
Երբ ետես նա, զի ունկնդիրք նորին
Բոլորք միախոհ խոր 'ի քուն մտին :
Սթափեցան նոքա ահիւ նոյն ընդ նոյն,
Հարցին, ո՞ւր է հուրն՝ միաբան ողջոյն :
Առ այս քարոզիչն, թարց ինչ խռովման,
« Դա դժոխս՝ ասէ, գո՛ւ որոտաձայն,
Ուր պարտին տանջիլ միշտ ամենքեան,
Որք 'ի քուն լինին 'ի քարոզութեան » :

## ԼԱ.

Իշխան մի ժլատ խօթութեամբ անձին
Անկեալ 'ի մահիճ, նեղէր սաստկագին :
Մին 'ի կարեկից ծանօթից նորին
Յղեաց զբժիշկ առ նա զյայտնին .
Բայց 'ի գալ սորա, և երբ զայնմանէ
Ազդ արար ծառայն, ժլատն այն ասէ,
Թէ « առ լինելոյ անձինս ցաւագար,
Ես ո՛չ ընդունիմ զայցելուս օտար » :

## ԼԲ.

Հայր ոմն զիւր որդի ծոյլ, անջանասէր
Բարկութեամբ սաստիկ երբեմն կշտամբէր,
Թէ ե՞ր զամն երիս 'ի մի դասատան
Նստի նա, իսկ այլք յառաջ ընթանան:
«Զինչ ամօթ՝ ասէ որդին ապաւում,
Երբ և ուսուցիչն յայն իսկ 'ի մերում
Նստի դասատան զամիս երեսուն,
Որ մեծ է քան զիս, ամօք և հասուն:
Բայց և սակս այսր բընաւ ոք զնա
Ոչ յամօթ առնէ, ո՛չ և զարմանայ»:

## ԼԳ.

Յայտնի ստախօս, երբ ծանօթք նորա
Ոչ հաւատային խօսիցն աներկբայ՝
«Զինչ արդեօք պարտիմ, ասէ՝ ես գործել,
Զի հաւատայցէք դուք ինձ անմրդել»:
Մին յունկնդրաց ետ պատասխանի,
Թէ «երբ խօսիցես, ասա ուղղակի՝
Ստեցեր, և մեք քո բանից յայնժամ
Կարեմք հաւատալ միշտ յօժարակամ»:

## ԼԴ.

Երբ յԷլբայ կղզւոյն Նափոլէօն արքայն
Դարձաւ 'ի փարիզ, ծառայք ամենայն
Լուտովիկոսին եկին անդ առ նա
Կալ 'ի ըսպասու, բայց ասէ նոցա
Արքայն, թէ «երթայք 'ի բաց դուք յինէն,
Զի 'ի բնէ անտի գտէք դուք ձեզէն`
Ես ոչ կարօտիմ կատուակերպ մարդկան:
Ոմանք հաւատարիմ միշտ զհետ երթան
Տեարց իւրեանց, իսկ դուք նենգաւ կամօքին
Յարգէք զորմունս տան քան զիշխող նորին:»

## ԼԵ.

Մահապարտ զինուոր, 'ի տեղի պատժոյն
Երբ ածիւր` ետես, զի միահաղոյն
Վազէր ժողովուրդ յառաջ քան զնա:
«Ընդէ՞ր շտապէք, ասէ ցնոսա,
Չգիտէ՞ք, զի թարց իմոյ գալստեան
Չիցէ կատարումն հանդիսի սերկեան»:

## ԼԶ.

Մին խօսէր երբեմն ընդ իւր ընկերի
Թ՚արդար դատ լինէր և գործ պանծալի,
«Զամէն բամբասողն կախել զլեզուէ,
Նոյն և զունկնդիրն նորայն զունկանէ ։»
Առ այս ասէ միւսն, «ուրեմն յաշխարհի
Չկարէ ոք զերծնուլ մնալ կենդանի»։

## ԼԷ.

Սոկրատայ էր կին լրբին, լեզուանի,
Որոյ էր չար բարի ո՛չ բանականի ։
Անգամ մի յամեաց այլն դառնալ ՚ի տուն
Յիւրոց զբաղմանց ՚ի սովոր ժամուն ·
Ուստի մինչ ետես, զի նա յետս դառնայ՝
Ելեալ ՚ի պատշգամբ անտի խիստ սպառնայ
Հայհոյէ բանիւք լկտի, անըմբեր ։
Իսկ առաջինին երբ անխօս համբեր,
Առեալ կատաղին զսափոր ջրոյ,
Թափեաց առն իւրոյ ՚ի վերայ գլխոյ ·
Յայնժամ Սոկրատէս առնէ պատասխան,
Թէ «զկնի այսչափ սաստիկ որոտման,
Այո՛ չէն զարմանք, զի անձրև տեղայ
Առա՛տ, բացարձակ յիմ գլխոյ վերայ»։

# ԼԸ.

Ոմն բժիշկ հռչականուն
’Ի հասանել ժամու մահուն,
Երբ այլ բժիշկք շուրջ զնովաւ,
Ափսոսային ցաւօք մեծաւ՝
Դառնայ ասէ՝ «ո՛չ է ինձ ցաւ,
Զի մեռանիմ անապաշաւ,
Թողլով զերկիս մեծահամբաւ
Իմ զկնի բժիշկս յոյժ լաւ»։
Իմաստ բանիցս թէ՝ ո՞յց վասն էր,
Անձնիւր ճշդիւ գիտել կամէր,
Ցանկայր ինքեան առնել պատկան
Զայն փառք, պատիւ, կոչումն անուան։
Իսկ երբ սոքին հարցին կրկին,
Որո՞ւմ այն բանք վերաբերին,
Ացեաց ընդ նոյն ’ի պատասխան,
Թէ «առաջինն և բնական
Է ջուր, երկրորդն ստէպ շարժումն,
Ուտել սակաւ և քիչ արբումն։

## ԼԹ.

Քանի մի պարոնք գտեալ 'ի դաշտի
Զայր գեղաբնակ կաղ, միականի,
Զսա սափրեն գէթ 'ի մի նուագ
Սուլել, առ ծաղու՝ յայն իսկ եղանակ,
Ըստ որում կոչէին խաշինք 'ի դաշտին.
Հեգն առ ամօթոյ յերեսաց նոցին,
Ընձար հլութեամբ յօտար տեսակին,
Սուլէ, բայց յուշիկ, կարի մեղմագին.
Իսկ երբ ծիծաղեալ նոքա վերստին
Հարկադրէր լինին թշուառականին,
Սուլել ես կրկին, միայն բարձրաձայն,
Ասէ պարոնաց նա 'ի պատասխան
Թէ՝ «երբ անասունք նման ձեզ մերձ կան,
Սովոր եմք սուլել այսպէս մեղմաձայն».

## Խ.

Մեծն Շահ Աբբաս բազմութեամբ զօրաց,
Զկնի յաղթութեան իւրոց թշնամեաց,
'Ի գալ, մտանել 'ի մայրաքաղաք՝
Ետես զի ծեր ոմն մերձ առ յորդ փոսակ

Տնկէ ճշդութեամբ մի զարմաւենի ։
Ասէ նմա Արքայն , « ընդէ՞ր ծե՛րունի
Տնկես դու զայդ ծառ , երբ յետ քառասուն
Ամաց տացէ դա զպտուղս հասուն ·
Իսկ վաղու անցեալ ամաց քոց գարուն
Փութով հասուսցէ քեզ զժամ մահուն » ։
« Ես վայելեցի , ասէ ծերունին՝
Զպտուղս ծառոյն , զոր տնկեաց այլ մին ·
Ուստի զայս տնկեմ ես նման նոցին ,
Զի վայելեսցեն այլք զբերս նորին » ։
Հաճ-հաւան բանիցս եւ արքայն հրաման ,
Տալ ծերոյն այնմիկ հազար դահեկան ։
Եւ երբ սա առեալ զդրամոց գումար ,
Գո՛հ եղեւ վասն այն զԱստուծոյ երկար՝
Հարցանէ Արքայն , գոհանաս ընդէ՞ր ։
Ասէ ծերն , « զոր մարդ վայելել կարէր՝
Ըստ ձերոց բանից , յամն քառասուն ,
Ես վայելեցի 'ի սերկեան այգուն » ։
Հաճեալ վերստին ընդ բանըս արդար ,
Հրամայեաց արքայն տալ զայլ եւս հազար ։
Մինչ ծերն զԱստուծոյ կրկին գոհանայր ,
Հարցանէ Արքայն , է՞ր և այդ՝ ո՞վ այր ։
Ասէ « գոհանամ՝ զի տունկն 'ի տարին
Բերս տայ մի անգամ , իսկ ծառն իմ կրկին » ։

## ԽԸ.

Ո՜հ բանաստեղծ զիւր վաստակ մնաց
Կարդայր 'ի յօդուածս ճշդիւ ընկերաց.
Իսկ 'ի յաւարտելն հարցանէ ցմին,
Որ հատուածք նմա լաւագոյն թուէին.
Սա անմէ՛նդ, վստահ առնէ պատասխան,
Թէ «այնք մի միայն, որք ո՛չ ընթերցան»:

## ԽԹ.

Ե՛ր զի՝ հայր զծոյլ որդին զիւր խրատէր,
Որ ո՛չ վաղ այգուն յանկողնոյ յառնէր,
Յօդելով ընդ բանս, յապացոյց խրատուն,
Թէ ոմն յայն աւուր ընդ այգս այգուն
Գտեալ է զոսկի զճանապարհայն:
Ըսէ որդին թէ՝ «ուրեմն այրն այն
Վա՛ղ քաջ էր յարուցեալ, որ կորոյս զոսկին,
Քա՛ն զոր եգիտ զայն, որք և միշտ շահին»:

## ԽԳ.

Մա՛լթացի ասպետք արարեալ ժողով՝
Խորհուրդ առնէին, թէ արդեօք որո՞վ
Զինարիւք կարեն կալ ընդդէմ զօրաց
Իննսուն հազար թուով թշնամեաց ։
Եւ մինչ յայս խոկմունս էին յուսահատ՝
Մի՛ն յանկարծ ձայնէ զուարթադէմ, ազատ,
Թէ «ընդէ՞ր եղբարք լինիք դուք աշխատ,
Երբ գիտէք ինքեանքդ, զի գոյ այժմ անհատ
'Ի մերում միջի երկրորդ քաջ Սամփսոն,
Որ ինքն միայնակ, վստա՛հ ժիր, զգօն,
Կարէ ելանել տալ մարտ թշնամւոյն,
Բռնել ցիր և ցան զգունդս ըստ հնոյն ։
Լուեալ այս բանից լիրբ կատականաց
Սամփսոն անուամբ մին 'ի Թուոյ ասպետաց,
Երբ ետես զի և միւս ընկերք նորին
Բարձրաձայն խնդան, ընդ վայր ծիծաղին
Թոյլ տալով ծաղու խօսիլ զանտեղին,
Մինչև չորոշել զայոն ընդ ոչին,
Թ'ունիս իրաւունս, ասէ՝ ո՞վ պարոն,
Արդարև քո բանք, ահա՛ ես Սամփսոն.
Բայց գիտե՞ս պէտք է քաջութեանդ գործին,
Զծնօտ միոյն 'ի ձէնջ ունիլ յիմ ձեռին ։

## ԽԴ։

Մէն յընդունողաց մոլար աղանդոյն ,
Որ կարծէր յանմիտս , թէ հոգի մարդոյն
Զկնի մահուն փոխի անցանէ
Եւ այլս յանասնոց կամ 'ի մարդկանէ ,
Պատահեալ երբեմն 'ի փողոցս Պօլսոյ
Ընդ միում օտար ծերունի մարդոյ ,
Եւ որ մտադիր հայելով , ապա
Ասէ նմա , թէ «երբ Պարոն , 'ի Մոսկուա
Ամաւ մի յառաջ` ես զքեզ տեսի`
Դու էիր ոչ մարդ , այլ ձի գոմանի » .
Տայ պատասխանի Պարոնն համարձակ
Եւ այս բան տխմար առըն ստահակ ,
Թէ` «իսկ ես զքեզ երբեմն յաւանակ
Տեսի ընդ բեռամբ յայս Պօլիս քաղաք » ։

## ԽԵ.

Տեսեալ ագահի երբեմն յերազի ,
Զի ուտէր յիւր տան սեղան մեծագնի ,
'Ի խոր մտածմունս 'ի ծախուց մասին
Ցաւի , տագնապի , յաղետից սրտին
Զարթնու , երդնու ես ոչ 'ի քուն լինիլ ,
Զի մի կրկնեսցի նոյնպիսի տեսիլ ։

## ԽԶ.

Յայտնի մի ագահ սիրով առ ոսկին,
Թաղեալ զիւր ամէն զգանձ 'ի գետին՝
Չդնէր ինչ 'ի գործ առ մնունդ անձին,
Մահուչափ տքնիւր, տանջէր դառնագին։
Բայց նորա յորժամ այն գանձ գողացաւ,
Նա յանչափս անկաւ տանջանաց 'ի ցաւ,
Ուստի յուսահատ ետ նա 'ի մտին,
Կարճել զիւր զկեանս երթալ զիւրովին։
Այլ այնքան էր սէր նորա առ ոսկին,
Մինչ զի մի՛ գընել զպարան խեղդին՝
Բարուոք նա վարկաւ առ օգտի անձին,
Լինել ծովահեղձ, — մահու ժանդ բաժին։

## ԽԷ.

Ինքնահաւան պատկերահան,
Որ կարծէր զինքն յարուեստ իւրեան
Ներհուն յոյժ վարժ և աննման՝
Ասէ երբեմն 'ի ժամ դիպման,
Միում յընկերց իւրոց վաղուեան,
'Ի ջերմ սիրոյն առ նա նշան,

Թէ տո՛ւր ծեփել զորմունս քո տան,
Որպէս զի ես նկարչական
Ցուցից զարուեստ իմ հմտութեան ։
Նա այս ընկերին, թարց ինչ խոկման,
Անկեղծաբար տայ պատասխան,
Թէ «լինէր իսկ փառք քո անուան՝
Եթէ դու նախ նկարէիր,
Եւ ապա ինձ ծեփել տայիր »։

## ԽՐ.

Մ՛ին հարց երբեմն ցփորձ ընկեր,
Թէ բարեկամք սուտ շահասէր
Որոյ, նմանին ։ ՙՆա առ այս բան
Ծանր իսկոյն տայ պատասխան,
Թէ «են նոքին ճանճից հանգոյն,
Որք ժողովին միահաղոյն
Նաւաստուց մինչ ցերեկոյն
՚Ի խոհանոց, և զօրն ողջոյն
Կեան անդ՝ մինչ գոյ ինչ ուտելի,
Իսկ ՚ի լինիլ վերջ ամենի,
Թողուն երթան ՚ի յայլ տեղի,
Ուր գտանի ուտեստ նմանի »։

# ԽԹ.

՚Ի գեղջ ուրեք գոյր աղքատ այր,
Որոյ իշխան էր սանահայր ։
Առ սա երբեմն նա գայ ՚ի տուն,
Խնդրէ տալ զէշն նմա յայգուն,
Բերել զջուր վասն իւրոյ տան ։
Այլ սանահայրն տայ պատասխան,
Թէ «ոգւով չափ եմ միշտ պատրաստ,
Տալ անխնայ քեզ զայն գրաստ,
Բայց ցաւ է մեծ, զի յայսմ աւուր,
Յղեալ է զայն՝ կին իմ այլուր »։
Իսկ մինչ բանիցս եղև վախճան,
Էշն յախոռէն յանկարծ եհան
Սաստիկ ձայն զունչական ։
Աստ կնքահայրն ՚ի զարմացման
Ընդ այս յայտնի բան ստութեան,
«Օ՜ ի՞նչ ասէ ձայնս, ո՞յր է և այն,
Իմ սանահայր գերամեծար »։
Սա թարց շփոթման և անպատկառ,
«Ա՞յ դու օրհնեալ՝ ասէ իսկոյն,
Է՞ր հաւատաս ձայնի իշոյն,
Եւ ոչ բանի քո կնքահօր,
Որ ոչ ստեաց բնաւ ցայսօր »։

## Ծ ։

Տրտունջ կալեալ երբեմն այր մի ,
Գանգատանօք իւր ազգակցի
Ասէր, ցաւէր թէ՝ է հեռի
Ի քաղաքէն թաղման տեղի ։
Առ այս ընկերն տայ պատասխան
Թէ՝ ե՞ր եղբա՛յր դու յայդ քո բան
Ցաւիս այդպէս անբաւական ։
Գիտեմ , ո՛չ ոք յետ իւր մահուան
Կարէ երթալ ոտիւք ինքնին
Ի գերեզման , այլ այլք տանին ․
Ուստի և թո՛ղ տժգոհ լիցին
Այնք , որք զայս հարկ լնուլ պարտին ։

## ԾԱ ․

Վարժապետ ոմն յաւուր տօնի ,
Գնեալ զտասն լորամարգի ,
Ետ խորովել աշակերտին ,
Պատուէր տալով՝ « տե՛ս թէ զմին
Արասցես դու մոխրոտ , ապա
Տաց ես ուտել քեզ ակամայ

Զամէն զտամն միանգամայն »։
Ելև չոգաւ նա 'ի շուկայն ·
Բայց աշակերտն, որ էր նինգոտ՝
'Ի խորովէն զմին մախրոտ
Արար դիտմամբ, ապա զ ամէն
Սկսաւ ուտել։ 'Ի շուկայէն
Փոյթ վարժապետն դարձաւ 'ի տուն,
Ետես, զի նա կայ 'ի լալին ·
Իսկ երբ հարցաւ վասն էրն լալման՝
Արտասուագին ետ պատասխան,
Թէ՝ « վարժապետ, ներեա՛, մեղայ,
Քո հրամանի ընդդեմ գրտայ ·
Զի յանկարծ ես յահեղ երկչոտ
'Ի խորովէն զմին մախրոտ
Արարի, և առ երկիւղի
'Ի կատարումն քո հրամանի
Կերի զմեց լորամարգիս,
Բայց զմնացորդն ուտել չէք կիս
Ոչ զօրութիւն, ոչ ախորժակ,
Թուին նոքին ինձ դառնորակ ·
Ուստի և լամ, դողամ ահիւ,
Թէ պատժելոց իմ քև խստիւ »։
Հէք վարժապետն մնացեալ անճար,
Ասէ՝ « ո՜յ լիրբ, անպէտ, տխմար,
Ո՞ւր է մնացեալն, բեր զի տեսից,
Գէթ նոքիմք զիմ քաղց լցուցից »։

# ՆՈՐ·

Անդ 'ի հնումն 'ի մէջ Տաճկաց
Էր կանոնեալ կարգ օրինաց,
Զսուտ վկայս ճշմարտատեաց,
Առ 'ի պատիժ նախատանաց՝
Ածել 'ի տես յիշոյ վերայ
Ընդ պողոտայս, վայրս հեռակայ ։
Իճիւ պատժոյս երբեմն հարկաւ,
Միոյ Հաճւոյ վերայ հատաւ,
Որ ստաբան էր յոյժ յայտնի ·
Ուստի առեալ զէշ մի բռնի
'Ի դրացւոյ պատժականին,
Յայն պէտս զօր մի 'ի գործ եդին ։
Այլ զի նոր ես այրն ստասաց
Գրգռեաց զդատ նոյն յանցանաց,
Մինչ պատժարարք զէշն այն դրացւոյն
Առին կրկին 'ի պէտ պատժոյն,
Սա գնաց զհետ իւրոյ իշոյն,
Եւ երբ հանդէպ եղև Հաճւոյն,
Ասէ նմա՝ «ա՜յ անօրէն,
Եթէ սիրես զՄարգարէն,
Բաւէ, 'ի մեղսդ դու զղջացիր,
Մի՛ ես ուտեր զայդ աղբ զաղիր,
Իսկ եթէ ոչ՝ փոյթ կալ անձին
Գրնել ինքեան զէշ առանձին ։

## ՃԴ.

Բանաստեղծ ոմն կոյր 'ի ծընէ
Առ Լանկթամուր գայ վաղ յայգուէ,
Յետ բարեմաղթ բանից խնդրէ,
Տալ թոյլ նմա երգել յանձնէ
Զնորահիւս երգս գովական.
Իսկ երբ վասն այս էառ հրաման,
Հար զջութակն, սկիզբն արար
Երգել զգով բաղդին յերկար:
Այլ զի էր իսկ դիտումն նորայն
Ածել 'ի յուշ՝ եթէ Արքայն
Եհաս այնքան մեծի փառաց՝
Ի գործ բաղդին և կամ դիպուած:
Հասու դիտմանս բանաստեղծին,
Արքայն ընդ քէն բանից նորին՝
Ասէ, կարծեմ՝ գիտես և դու
Թէ՝ այլ և բաղդն է զաչացու:
Բայց բանաստեղծն յիւր երգ նախնի
Դարձեալ անդրէն, յանպատրաստի՝
Կցէ ընդ բանս թ՝ այո՛ Արքայ,
Ճի՛շդ են կարծիքդ քո աներկբայ.
Զի եթէ բաղդն, ո՛չ կոյր լինէր,
Նա՝ ո՛չ 'ի տան կաղի բնակէր:

# ԾԳ.

Երեք Տաճիկք դատարկասուն,
Խրախ գինեհար ընդ այգս այգուն,
Գալով 'ի շուրջ 'ի պողոտայս՝
Տեսին զչորս հայոց կանայս,
Որք բեռնաւոր զիւրեանց իշեան
Վարէին լռու դէպ 'ի շուկայն ։
Մեծն յայն լրբեց յառաջընթաց
Գայ առ կանայս դիմօք ծաղրած,
Ասէ ցմին՝ գոյ ուղեւոր՝
Վաճառելի առ ձեզ քակոր ։
Բայց չեւ հատեալ էր բան նորայն,
Զռնչաց էշ մի յոյժ բարձրաձայն ։
Արկնեաց լկտին ծիծաղանօք,
Թէ 'ի Տաճկաց գուցէ ոչ զոք
Բնաւ չէ տեսեալ էշ քո անկիրթ ։
Կինն ասէ՝ ոչ, էշ իմ չէ բիրտ,
Այլ ունի նա միշտ սովորոյթ,
Երբ զիւր ընկերս տեսանէ, փոյթ
Խնդայ, զուայ խիստ անսովոր,
Մանաւանդ զի այսօր քակոր
Եբեր յընծայ քեզ ծանօթիդ,
'Ի լցուցումն նախաճաշկիդ ։

## ԾՆ·

'Ի տուն տնանկի գող գիշերային
Մտեալ և մինչ յուզէր ըռելեայն
Գտանել զիր ի՛նչ , կի՛ն տանու տեառն
Սթափեալ 'ի քնոյ , ընդ ունկն իւր առն՝
Զարթի՛ր , ասէ՝ ո՛ հէքդ թշուառ ,
Գի՛տ փրկութեան մերոյ հնար ·
Գող մի ահա՛ շրջի 'ի տան ։
Բայրն հանդարտի՛կ տայ պատասխան ,
Լուռ լեր դու կի՛ն աներկեան ,
Սխալի 'ի կարծս հիւր մեր անծան ,
Բնաւ անշահ ջանքն ընդունայն ,
Զի զոր չէ հնար մեզ 'ի տունջեան ,
Զիա՛րդ գտցէ նա գիշերայն ։
Իսկ թէ ունի զի՛նչ ընդ ինքեան
Բերեալ յայլուստ՝ մեք անխափան
Խլեսցուք իբրու տան մեր պատկան ։
Լուեալ բանիս , գողն ապուշաւ ,
Թափուր յօգտից , և հեռացաւ ,
Թողլով զանէծս բիւր տնանկին ,
Ընշահ վասն այն անկոչ հիւրին ։

## ԾԶ.

Այր մեծատուն յիւր ձմերոցի
Ունէր պահեալ ծառ թզենի ։
Քաղեալ զբերս հասուն նորին ,
Յանձնէ նա գրով իւր ծառային
Տանել յընծայ բարեկամին ,
Որպէս զազնիւ գիւտ ձմերային ։
Ծառայն բարի զճանապարհայն ,
Առ 'ի հաշուել բաց զնաճայն ,
Եւ զի թուզքըն էին տասն ,
Եկեր զնոսին , թող զմի մասն ։
Ապա զմնացորդն ընդ նամակին
Հասոյց 'ի տուն ըստ հրամանին ։
Իսկ երբ 'ի գրոյն եղեւ յայտնի ,
Թէ թիւ թզոցն յոյժ պակասի՝
Եւ երբ հարցաւ վասն էրն գործոյն ,
Ծառայն աննենգ , յանգէտս 'ի գրոյն ,
Պարոն , ասէ՝ ո՛չ սխալիս ,
Զճանապարհայն կերի զերիս ։
Այլ զի մնային միայն երեք ,
Երկնեաց պարոնն , գիտեմ երբէք
Չէ՛ք խիղճ 'ի քեզ , ասա՛ զիա՞րդ
Ուտել զնոսին կարացեր չորդ ։
Անգէտ բանիցս հարցման մնաց ,
Ծառայն յանկարծ ձեռն զիւր ձգեաց

Զմնացեալ թուղմն 'ի նաճայլն
Հան, արկ ալրագ առ պարոնին
Յիւր 'ի բերան, եկուլ զնոսին.
Ապա ասէ, ահա՛ սովին
Օրինակաւ կերի՝ Պարոն,
Բայց ո՛չ գիտեմ թէ՝ քանիօն:

## ԾԳ.

Պատկերահան մի անպիտան
'Ի տառապանս թշուառութեան,
Հնարեաց 'ի լուր հասարակաց,
'Ի գիւտ շահուց վասն իւր կենաց,
Թէ նա գիտէ զարհեստ բժշկի:
Եւ երբ զնա յաճախակի
Տեսին զբաղեալ յայս պաշտաման՝
Հարցաւ վասն էրն, եւ պատասխան,
Յիմ գործս նախնի յոյժ հեշտապէս
Բոլոր վրիպակք գային 'ի տես.
Այլ յարուեստի բժշկութեան
Անտես լինին նոքին մարդկան,
Դնին անլուր 'ի գերեզման,
Ընդ մեռելոցն 'ի յաւիտեան:

## ՃԸ.

Ոմըն բժիշկ 'ի վէճս բանից
Ընդ միում յիւրոց հին ծանօթից,
Խիստ զայրացեալ՝ 'ի վրէժ քինու,
Սպառնայր զնա մատնել մահու.
Բայց նա առ այս ցուրտ, անտարբեր
Տայ պատասխան թէ՝ ոչ, ընկեր։
Ես երկնչիմ 'ի քէն բնաւ,
Զի եթէ յիս գտցի ինչ ցաւ,
Գիտելով իմ սրտիդ զքէն,
Չառաքեցից երբէք զքէն։

## ՃԹ.

Երբեմն ծառայ միոյ բժշկի
Խնդրէր տալ թոյլ 'ի կաղանդի,
Հայցել զտուրս 'ի հիւանդաց,
Զորս նա բժշկէր յախտից բազմաց։
Այլ ժամանակն զի էր հեռի,
Ասէ բժիշկն իւր ծառայի,

Թէ այդ խորհուրդ է անտեղի ·
Զի դեռ հասեալ չէ նոր տարի ։
Յամենեալ ծաւայն , տայ պատասխան
Թէ ապ՚ ուրեմն ՚ի յաւիտեան
Պարտիմ մնալ բնաւ անշահ ,
Զի հաղիւ թէ թողցէ խիստ մահ
Մինչ ցնոր ամն գտնեմ զմին
Ի հիւանդացդ կանգնիլ յոտին ։

Կ·

Հիւանդ գոլով ոմն դատաւոր ,
Յանկարծ ՚ի ձայն խիստ ահաւոր
Գոչեաց · « ո՛վ իմ Աստուած , Աստուա՛ծ »
Ապա առ մին ՚ի բժշկաց
Դարձեալ՝ ասէ , « վա՜յ ինձ , օգնեա՛ց ,
Տանիմ դժոխոց ես տանջանաց » ։
Բժիշկն անխտիր տայ պատասխան ,
« Ահ , վաղ հաս քեզ վարձ հատուցման » ։

## ԿԸ.

Փոքր ինչ վաղ քան զժամ պատժոյ,
Ցգող եհարց այր մեծարոյ,
Զորպիսի՞ նա կարծիս ունի
Զհանդերձեալ կենաց երկնի ։
Պատասխանեաց գողն հապճե՛պ,
Թէ յոյժ անշահ և տարադեպ .
Զի մեռանողք զինչս ընդ ինքեանս
Ոչինչ տանին աստի յայն կեանս .
Աստի և ինձ չիցէ ինչ շահ
Ընդ, ուր երթամ և ես անմա՛հ ։

## ԿԹ.

Ցաւագար ոմն զաւուրս երկար
Տանջէր ախտիւք խիստ չարաչար .
Իսկ երբ հարցաւ, է՞ր չառաքէ
Զյայտնի տեղւոյն զբժշկէ,
Ասէ վասն այն ո՛չ յօժարիմ,
Զի մեռանիլ ես ոչ կամիմ ։

## ԿԳ.

Արբշիռ այր մի յոյժ ախտաժետ
Կոչեաց զբժիշկ մի բանագէտ ,
Որոյ զննեալ զչափ ցաւոյն ,
Հրաժարական տալով զողջոյն՝
Ասէ , վաղիւ առաւօտուն
Յեօթներորդի 'ի կէս ժամուն
Բարձցիս յաստեացս յաշխարհ վերին ։
Այլ ցաւագարն զիւր ոյժ յետին
Ժողովեալ՝ փոյթ ասէ նմա ,
Սուտ է կարծիք քո անուղղայ ,
Իսկ թէ հաստատ , և ոչ խաբիս՝
Ե՛կ դու կռեա՛ դաշինս ընդ իս ,
Զի թէ վաղիւ ժամու յըննի ,
Եղէց անփորձ և կենդանի՝
Տալ ինձ ազնիւ գինւոյ շիշ մի ,
'Ի պատիւ քո կեղծ արհեստի ։

## ԿԴ.

Նորահասակ մի պատանի
Երբեմն ՚ի խօսս ընդ ընկերի՝
Ասէ, սիրոյ գաղտնիք խորին
Անհաս են յոյժ և դժուարին. —
Ես զկնի իմ հարսանեաց,
Առ ջերմ սիրոյս, ՚ի տենչանաց,
Կամէի զիմ ուտել զկին.
Իսկ այժմ ցաւիմ ես դառնագին,
Զի ո՛չ յայնժամ արարի զայն,
Յանգէտս թողեալ ՚ի յապագայն։

## ԿԵ.

՚Ի ժողովլի հասարակաց,
Ամէն յանփորձ իմաստակաց
Եւ յամբերոն դիմօք գոռոզ,
Խրատական կարդալ քարոզ։
Բայց ՚ի բանալ զիւր զբերան,
Յառաջին բանս սկզբնական,
Ոչ կարացեալ խօսել յարմար՝
Մինչ կակազէր նա անդադար,
Արկնամամբ միոյն բնաբանի
Եթէ՝ «ես եմ հովիւ բարի՝»

Յայտնին Լուտեր, որ ըստ դիպաց
Էր անդ 'ի Թիւս բազմականաց,
Ասէ անվարժ այն քարոզչին,
Թէ՝ մի՛ լինիր աշխատ անձին,
Էջ յամբիոնէդ, այդ չէ՛ տեղի
Քոյ իսկ բնաւ, զի դու բարի
Գուցէ կարես լինիլ ոչխար,
Այլ ոչ երբէք հովիւ անչար։

## ԿԶ.

Կին մի կծծի իսպառ կարկամ,
Որ խիստ յախտից գամ քան զգամ
Թափեալ յուժոյ, յետին անգամ
Ճնշէր, և երբ հաս մահուն ժամ։
Կամելով զի զողջոյն գիշեր,
Մի՛ մնասցէ վառ իւր լապտեր,
Փչեալ շիջոյց զայն փութաբար,
Ասելով թէ՝ կենաց վըճար
Կարէ լինել և թարց լուսոյ,
Որ չէ՛ ինչ շահ, հնար դեղոյ։

## ԿԷ.

Ոմանք երբեմն խորհուրդ տային
Հօր, որ կամէր ածել զկին
Առն իւր որդւոյ, մնալ մինչ զի
Սա եղիցի զգօն մտացի,
Ապա վախճան տալ այն դիտմանն.
Հայրն յուշէր եւ պատասխան,
Թէ կատարել զայդ չէ՛ ըմբռն,
Զի երբ որդիս լիցի զգօն,
Ոչ առնուցու բնաւ իւր կին,
Կրել զբեռն խիստ դժուարին:

## ԿԸ.

Զայր բանիբուն ոմանք հարցին,
Ո՛ւր կեալ մարդ է բարւո՛ք, դիւրի՛ն:
Անդ իսկ՝ ասէ, ուր մուտք հասի
Ե՛ն քան զծախսըն աւելի,
Եւ ուր օրէնք ազդու, սաստիկ
Ե՛ն առաւել քան զմարդիկ:

Ա. Ե. Ր. Զ.

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկեր.
5 ИЮНЬ 1898
Центр. Библiот.-Чит.
Арм. Благ. Общ.

## ՅԱՆԿ։


էջ.

Հայր մեր, որ յերկինս ես… փառք յաւիտեանս .... 5.
Երգ առ Աստուած .... 7.
Գոհաբանութիւն .... 9.
Աղօթք .... 11.
Տնանկ .... 12.
Տարեգլուխ .... 17.
Ծաղիկ .... 23.
Մանուկ .... 26.
Տարեմուտ .... 29.
Այցելու գերեզմանատան .... 31.
Հրաւէր առ ընկեր .... 40.
Երգ .... 43.
Սոխակ .... 44.
Թռչնակ .... 46.
Խօսք ընդ սոխակի .... 48.
Գեղձանիկ .... 49.
Արտոյտ բանդարգել .... 51.
Հատիկ ծաղկան .... 52.
Քաղցրութիւն բարեգործութեան .... 55.
Խնդութիւն .... 58.
Մանուշակ .... 61.
Թուղթ առ Ս… Ա. .... 65.
Անակնկալ դիպուած .... 67.
Վերստին հանդիպումն .... 69.
Խօսք ընդ սիրուհւոյ .... 72.
Բանաստեղծութիւն .... 75.
Զուարճալի բանք .... 78 — 127.